

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 10.06.2020թ. Հրերշարքի թիվ 24 (945)

## Պատմություն

Պատմությունը պատմություն է, եթե սոսկ պատմություն է: Դեպքերի շարադրանքը, իրականության պատճեն-նկարագրությունը պարզապես **տարեգրություն** է, որը դառնում է պատմություն՝ իր **նշանակությամբ**: Հայերենը հրաշալի տարբերակում է **տարեգիր** եւ **պատմիչ** հասկացությունները՝ երկրորդի համար ընդգծելով **գաղափարախոսի** դերը: Պատմությունը նախեստաց **գաղափարաբանություն** է, որը սնուն է **ներկան**, իբրեւ ատաղձ հասարակական գիտակցության տարբեր ձեւերի համար, իբրեւ ազգային գաղափարախոսության հիմնական բովանդակություն: Ե՛վ անհատի, ե՛ւ ժողովրդի համար իր կյանքի պատմությունը իր մտածողության ելակետային դաշտն է, իր գործունեության ծրագրավորողը, իր ապագայի հիմքը:

Հայերս սիրում ենք պատմությունը: Թերեւս որեւէ մեկ այլ ժողովուրդ, ընդհանրական կտրվածքով, այդքան մեծ հետաքրքրություն չի դրսեւորել պատմության հանդեպ, որքան մենք: Սակայն որեւէ մեկ այլ ժողովրդի պատմությունը, կարծես, այնքան խճճված չէ, որքան մերը: Ո՛չ իրականում: Պատմագիտության մեջ:

Հայ ժողովրդի **ծագման** խնդիրը հայ պատմագիտության մեջ մնում է հարցերի հարցը եւ ցարդ՝ անբողջովին չլուծված: Մեր դասագրքերում, ակադեմիական հրատարակություններում հայ ժողովուրդը շարունակում է ներկայանալ միայն որպես **Հայկական Լեռնաշխարհի** բնիկներից մեկը եւ թվարկվել շուրջ տասնյակ, իբրեւ թե գոյություն ունեցած, ոչ հայկական ցեղերի, ցեղախմբերի շարքում... Հայոց լեզուն հնդեվրոպական **մայր լեզվից** անջատվել է դեռեւս **մ.թ.ա. 5-4-րդ** հազարամյակներում, իսկ հայերն իբրեւ ժողովուրդ պատմության ասպարեզ են իջնում... միայն **մ.թ.ա. 2-1** հազարամյակներում... Ջարմանալի է, չէ՞: հնագիտական պեղումները, մարդաբանական ուսումնասիրությունները, ազգագրական վերլուծությունները մեր ներկայությունը երկրագնդի վրա՝ իբրեւ **բանական արարածների**, հասցնում են ընդհուպ մինչեւ մարդու ծագումը աշխարհում, իբրեւ **ժողովրդի**՝ մինչեւ ջրհեղեղյան ժամանակներ (**մ.թ.ա. 12-8-րդ** հազարամյակներ) ... Իսկ մեր պատմաբանների մեծ մասի աշխատություններում հայերը մ.թ.ա. 5-1 հազարամյակներում, շուրջ 4 հազար տարի գտնվում են կազմավորման գործընթացներում... ժամանակին, երբ երջանկահիշատակ **Ռաֆայել Իշխանյանը** փորձում էր հայ ժողովրդի ծագման հարցում հստակություն մտցնել եւ լեզվաբանական ու պատմագիտական անհերքելի փաստարկներ ներկայացնել, ոմանք նրան անվանում էին դիլետանտ (թեեւ անվանի լեզվաբան էր, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր) եւ շարունակում էին հավատարիմ մնալ օտար մի շարք գիտնականների տեսակետներին:

Արդ, հայոց պետականության վերականգնումից հետո անցել է 29 տարի: Ժամանակը չէ՞ վերանայելու մեր պատմագիտության կնճռոտ խնդիրները, վերջնականապես ձեռքազատվելու այլազգի գիտնականների «պարտադրած» դրույթներից, հարակից տարբեր գիտությունների **նորագույն** տվյալները վերլուծելու, համադրելու, ամբողջության մեջ մեր պատմությունը սրբագրելու, իր ողջ վեհությամբ վեր հանելու եւ վերստին իր տիրոջը՝ ժողովրդին, վերադարձնելու: Երբ օտարները, մանավանդ՝ իշխող, մկրատում են քո պատմությունը, ինքնին բացատրելի է, թե ինչու: Եթե մեկը չգիտի, որ արքայորդի է, նրան ավելի հեշտ է պահել ստրկական շղթաների մեջ, քան թե նրան, ով, թեեւ շղթայված, իրագել է դառնում իր ազնվական ծագմանը եւ վայրկյան առաջ փորձում է ազատություն ձեռք բերել՝ անգամ վտանգելով կյանքը: Օտարները մեր պատմությունը խեղաթյուրել են **քաղաքական** նպատակներով: Մենք պետք է ժամ առաջ մաքրենք մեր պատմության բոլոր արհեստական աղավաղումները եւ զուլալենք այն դարձնելով այնքան պարզ ու մաքրամաքուր, որքան մեր ժողովրդի ծագումը... Բավական է **նայենք ու չտեսնենք, ունկն դնենք ու չլսենք** կամ վախենանք, թե մեզ «ազգայնամոլ» կանվանեն. է՛, եթե առաջինն ենք, ինչո՞ւ չասենք, սպասենք, որ նախ օտա՞րը ասի, ու հետո միայն մենք կրկնե՞նք... Անկախությունը միայն քաղաքական շուռ չէ՛, անկախությունը ենթադրում է նախեստաց **գաղափարական ազատություն**, առանց որի մեր բոլոր զարգացումները, եթե լինեն էլ, կլինեն միայն օտարի ծրագրավորմամբ:

Այսօր մեր գաղափարական դաշտում ակնհայտ է երկու ճշմարտության բացահայտման հրատապությունը: Նախ՝ **մեր ժողովրդի ծագման խնդրի վերջնական հստակեցումը**, ապա՝ մեր **քաղաքական կողմնորոշումների վերանայումը**, Պատմական հայրենիքը կորցնելու **իրական** պատճառների վերհանումը եւ այն կրկին ձեռք բերելու ճանապարհին **իրական** խոչընդոտները մատնանշելու խիզախությունը:

Գ.Ս.

## Հեռավար դասախոսություններ

### Ուսուցում՝ զուգորդված մրցույթով

Հանրապետության նախագահ **Արմեն Սարգսյանը** նախաձեռնել էր առցանց դասախոսությունների շարք, որի նպատակն է ստեղծված իրավիճակում հեռավար ուսուցման մեթոդի կիրառմամբ ուսուցման շարունակականությունն ապահովել ուսանողների համար:



շարունակությունը՝ էջ 2

## Մայր Աթոռ

### Բժիշկների օրհնության կարգ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Սուրբ Գայանե վանքում կատարվեց բժիշկների եւ բուժաշխատողների օրհնության կարգ:



Այս առիթով դուրս էր բերվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահվող Սուրբ Դուկաս ավետարանչի մատուցարկիր Աջը: Սուրբ Դուկաս ավետարանիչը համարվում է բժիշկների հովանավորն ու բարեխոսը:

շարունակությունը՝ էջ 2

## Մրցույթ - փառատուն

### Երեւանն Արամ Խաչատրյան է լսում

Հունիսի 6-ին՝ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, մեկնարկել է Խաչատրյանի անվան 16-րդ միջազգային մրցույթը՝ առցանց ձեւաչափով: Մինչ մրցույթին նվիրված ասուլիսի մեկնարկը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Արայիկ Զարությունյանը**, Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հոգաբարձուների խորհրդի նախագահ, արտակարգ եւ լիազոր դեսպան **Արմեն Սմբատյանը**, Ժյուրիի նախագահ, ՀՀ ժողովրդական արտիստ **Էդուարդ Թադևոսյանը**, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն **Արմինե Գրիգորյանը** Կոմիտասի անվան պանթեոնում ծաղիկներ են խոնարհել կոմպոզիտորի հիշատակին:

շարունակությունը՝ էջ 3



# Ուսուցում՝ գուլգորդված մրցույթով

սկիզբը՝ էջ 1

Դասախոսություն-դասաժամերն ավելի հագեցած դարձնելու, ինչպես նաև ուսանողների կրթական և գիտահետազոտական հմտություններն ու հետաքրքրությունները խթանելու նպատակով Արմեն Սարգսյանը նաև մրցույթի ձևով տնային հանձնարարություններ էր տվել մասնավորապես Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի, ինչպես նաև արեւելագիտության ֆակուլտետների ուսանողներին՝ առաջարկելով աշխատանքներ գրել տարբեր թեմաներով:



Նախագահ Սարգսյանի առաջարկին արձագանքել են ոչ միայն ԵՊՀ-ի, այլև Գանրապետության մի շարք այլ բուհերի և արտերկրի համալսարանների ուսանողներ: Նախագահի աշխատակազմ ներկայացված ավելի քան 50 աշխատանքները երեք հիմնական թեմաներով են՝ Մերձավոր Արեւելքի դերը և նշանակությունը ժամանակակից աշխարհում, վարակների մաթեմատիկական մոդելավորումը և համավարակի պայմաններում բուժաշխատողների անվտանգության բարձրացման մեխանիզմները:



Մաթեմատիկական մոդելավորման և բժշկության ոլորտներում աշխատանքներ են ներկայացվել ինչպես անհատ ուսանողների, այնպես էլ խմբերի կողմից: Նշված ոլորտներից ընտրվել են չորսական, իսկ արեւելագիտության ոլորտից՝ երեք աշխատանք: Ուսանողական աշխատանքներն ամփոփվել են Գանրապետության նախագահի աշխատակազմում ստեղծված հանձնախմբի կողմից: Ընտրված աշխատանքների հեղինակները հյուրընկալվել էին նախագահական նստավայրում:

Շնորհավորելով հաղթողներին և շնորհակալություն հայտնելով իր առաջարկն ընդունելու ու հետաքրքիր ուսումնասիրություններ ներկայացնելու համար՝ նախագահ Սարգսյանը նրանց է հանձնել նախատեսված մրցանակները՝ գրքեր և համակարգչային տեխնիկա:

Նախագահը հետաքրքրվել է ուսանողների հետագա ծրագրերով ու անելիքներով, հաջողություններ մաղթել նրանց՝ հորդորելով շարունակել ներկայացված թեմաների վերաբերյալ ուսումնասիրությունները և ձեռքբերումների մասին պարբերաբար տեղեկացնել իրեն: Նա նաև պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտության դեպքում աջակցել երիտասարդներին: «Շարունակեք ստեղծագործել, աշխատանք կատարել: Դա ոչ միայն հետաքրքիր և օգտակար կլինի ձեզ համար, այլև հաճույք կպատճառի ձեզ», - ասել է նախագահը:

Ուսանողներն իրենց հերթին շնորհակալություն են հայտնել նախագահ Սարգսյանին՝ նշելով, որ նման նախաձեռնություններն ու նախագահի կողմից մրցանակի արժանանալը ոգեւորիչ են և խթան՝ ձգտելու նոր հաջողությունների:

# Բժիշկների օրհնության կարգ

սկիզբը՝ էջ 1

Վեհափառ Գայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբանները Սուրբ Դուկաս Ավետարանչի բարեխոսության հայցով իրենց աղոթքը բարձրացրեցին առ Աստված համավարակի դժվարին պայմաններում իրենց աստվածահաճո ծառայությունը բերող բժիշկների ու բուժաշխատողների պահպանության, անվտանգության և անձնվեր գործունեության արդյունավորման համար:

Արարողությանը ներկա էին մի շարք բժշկական հաստատությունների ղեկավարներ, բժշկական կենտրոնների COVID-19 կլինիկաների պատասխանատուներ և բժիշկներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Գայրապետի խորհուրդի նախագահ Սուրբ Դուկաս Ավետարանչի մատուցած օրհնության արարողություն կատարեցին՝ հայցելով Տիրոջ գորակցությունը համավարակի տագնապի փորձությանը դիմագրավող աշխարհին և մեր ժողովրդի զավակներին: Առանձնաբար Բարձրյալի օգնությունը և պահպանությունը խնդրեցին դժվարին այս օրերին ծանրագույն պատասխանատվության ներքո աշխատող բժիշկներին ու բուժաշխատողներին: Մեր սրտի փափագն է մասնավոր այս արարողությամբ Գայրապետական Մեր սերն ու օրհնությունը և բարձր գնահատանքը վերստին բերելու առողջապահության ոլորտի բոլոր աշխատակիցներին՝ ի դեմս այստեղ ներկա մեր սիրելի բժիշկների, և աղոթելու ձեր առողջության, անվտանգության և անձնվեր ծառայության արդյունավորման համար:

Սիրելիներ, աստվածաշնորհ է մարդու կյանքն ու առողջությունը: Դուք եք նաև պահպաններն ու հոգատարողները այդ մեծագույն պարզելի և ներկա բարդ հանգամանքներում ամենայն ջանադրությամբ պայքարում եք համավարակից տուժածների կյանքի պահպանման, առողջության վերականգնման և ապաքինման համար: Հիվանդի նկատմամբ բժշկի պատասխանատվության ու հոգատարության կարեւորությունը շեշտում է մեր մեծ բժշկապետ Մխիթար Գեղեցեցիի հորդորով գրված «Ձերմանց մխիթարութիւն» հայտնի աշխատության մեջ: Մարդուն տրված բազում շնորհներ, ինչպիսիք են հոգատարությունը, նվիրումը, սերն ու կարեկցանքը, դրսեւորվում են ձեր շնորհակալ գործունեությամբ, որին ակնառես ենք հատկապես համավարակի այս խռովահույզ օրերին: Մեծ նվիրումով հոգ տանելով հիվանդներին՝ դուք արտահայտում եք ձեր սերը Աստծո և Աստծո կողմից արարված մարդու հանդեպ: Արդարեւ, ամեն մի տկար մարդու խնամքի մեջ դրսեւորվում



է խոնարհումն ու սերը առ Տերը, ինչպես Քրիստոս է ասում. «Հիվանդ էի և Ինձ տեսնելու եկաք ... քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. 25.36-40):

Հիրավի, մեծ պատվի, հարգանքի ու խոնարհումի է արժանի ձեր ծառայությունը, որ գնահատված է եղել բոլոր ժամանակներում: Դրա վառ վկայությունը մենք տեսնում ենք նաև Նոր Կտակարանում, որտեղ մեծարվում է Սուրբ Դուկասը որպես հայտնի բժիշկ (Կողո 4գ14), ով Իր Ավետարանում հայտնում է Տիրոջ պատվերը՝ խնամատարելու հոգին ու մարմինը (Դուկ. 12.23): Դուկաս Ավետարանիչը քրիստոնյա աշխարհում հովանավորն ու բարեխոսն է բժիշկների ու բուժաշխատողների և մշտապես Աստծո առջև բարեխոս է ձեզ համար, աջակից երախտարժան առողջապահական գործունեություն իրականացնողներին: Այսօր էլ Աստված զորակից է ձեզ, որ համավարակի այս օրերին նեղությունների դիմագրավումով ձեր գիտելիքները, փորձառությունն ու կարողությունները ամբողջանվեր ծառայեցնում եք մարդկանց բուժման, վարակվածների ապաքինման համար: Ի սրտե աղոթքով մաղթում ենք ձեզ քաջեռանդություն, ուժ ու կորով աստվածահաճո և աստվածօրինյալ ձեր վսեմ ծառայության մեջ:

Մենք վերստին Մեր օրհնությունն ու շուտափույթ կազդուրման մաղթանքն ենք բերում վարակից տուժած Մեր սիրելի զավակներին, մեկուսացման մեջ ապաքինվող մեր քույրերին ու եղբայրներին: Անկուն մնացեք ոգով ու հավատով, առ Աստված ապավինությամբ դիմագրավելով դժվարին փորձությունը, որպեսզի ապաքինված շարունակեք ստեղծարար ձեր կյանքը՝ ի սեր հարագատների ու մերձավորների և մեր հայրենիքի: Խորապես անհանգստացած ենք, որ տագնապի այս օրերին համավարակը ահագնանում է և մեր ծավալ ստանում՝ թանկագին կյանքեր խլելով: Ամենքս մեր պատասխանատվությամբ և առողջապահական կանոններին լրջությամբ հետեւելով ի վիճակի ենք կանխելու վարակի հետագա տարածումը և դուրս գալու այս մտահոգիչ իրավիճակից: Մեր հորդորն է ամեն-

քիդ, որ ամենայն խստությամբ պահպանեք բոլոր հրահանգները՝ առողջ մնալու, վարակի տարածման պատճառ չդառնալու և այս փորձությունը միասնաբար հաղթահարելու համար:

Ի սրտե հայցում ենք, որ Ամենակալ Տերը պահի ու պահպանի համայն աշխարհը, հայրենի մեր երկիրը խաղաղության ու բարօրության մեջ: Այժմ միասնաբար աղոթենք առ Բարձրյալն Աստված և Սուրբ Դուկաս Ավետարանչի բարեխոսությամբ խնդրենք Տիրոջ քաղցրությունն ու օգնականությունը մեր բժիշկներին ու բուժաշխատողներին և Իր ամենախնամ հովանին մեր ժողովրդին՝ ի Գաստան, Արցախ և ի Սփյուռս:

**Քրիստոս Աստված մեր, ամենախնամ Բժիշկ հոգիների և մարմինների, Սուրբ Դուկաս Ավետարանչի աղոթքներով և բարեխոսությամբ օրհնիր, պահիր ու պահպանիր մեր ժողովրդին և համայն աշխարհին, աշխարհականներին և հոգեւորականներին, մեծերին և փոքրերին, արանց և կանանց, և Քեզ ապավինող Քո բոլոր զավակներին: Պահիր և պահպանիր անձնվեր ծառայություն մատուցող մեր բժիշկներին և բուժաշխատողներին, ովքեր իրենց կյանքը հանապազ վտանգի ենթարկելով փրկում են մերձավորի կյանքը: Օրհնիր և բժշկություն պարգևիր վարակից ապաքինվող անձանց և արիություն շնորհիր բոլոր մեկուսացվածներին: Քո սուրբ և պատվական խաչի հովանու ներքո, փրկիր և ազատիր երեւելի և աներեւույթ բոլոր թշնամիներից: Եվ մեզ արժանի դարձրու գոհությամբ ու երախտագիտությամբ փառավորելու Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:**

# Երեւանն Արամ Խաչատրյան է լսում

Նախագիծ

## Ուսման վարձը կփոխհատուցվի եկամտային հարկից

սկիզբը՝ էջ 1

Ուղղունելով մրցույթի կազմակերպիչներին՝ նախարար Արայիկ Գարուսյանը նշել է, որ թեև ցավալիորեն այս օրերին մշակույթը կորուստներ է կրում, բայց սա նոր հնարավորություն է՝ օգտագործելու ժամանակակից տեխնոլոգիաները՝ նոր շունչ հաղորդելով նաև արհեստական բանականությանը: Նախարարը հաջողություն է մաղթել աշխարհի տարբեր ժայրերի մրցույթի բոլոր մասնակիցներին և հավելել. «Սա ոչ միայն Հայաստանի, այլև շատ երկրների մշակութային կյանքում կարեւոր իրադարձություն է: Արամ Խաչատրյանը մեր մշակույթի խորհրդանշաններից է, այդ իսկ պատճառով մեծ կարեւորություն ենք տալիս այս մրցույթին: 2020 թվականի այս մրցույթը կլինի յուրօրինակ և առավել հիշարժան»:



Արմեն Սմբատյանը եւս շնորհավորել է երաժշտասեր հասարակությանը՝ կարեւորելով այն հանգամանքը, որ այս օրերին ՀՀ կառավարությունը հավատացել է աջակցել է մրցույթի կայացման առցանց ձևաչափին: «Աշխարհն այսօր ապրում է տարբեր խնդիրներով, սակայն երաժշտությունը, արվեստն իրենց տեղը գտնում են, և մենք առաջիկա օրերին կհիանանք տաղանդավոր երաժիշտներով: Մենք երաժշտության միջոցով շփվում ենք աշխարհի հետ. անցած մի քանի տարիների ընթացքում աշխարհում մոտ 1800 երաժիշտ սովորել է կատարում է Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Սա մեծ քաղաքականություն է. մրցույթի միջոցով հայկական երաժշտությունը հնչում է աշխարհում ոչ միայն հայերի, այլև օտարազգիների կողմից: Այժմ արդեն վստահ են՝ նոր էջ ենք բացում հաջատրյանի անվան միջազգային մրցույթում: Աշխարհում կա հետաքրքրություն մրցույթի նկատմամբ, բավականին մեծ է մասնակիցների աշխարհագրությունը, ինչով կարելի է միայն հպարտանալ», - նշել է նա:

Մրցույթի մասնակից ջութակահարները հնարավորություն են ունենալու ծրագրավորման ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ստանալ նվագախմբի նվագակցությունը, ընտրել հարմար տարբերակն ու իրենց կատարումը հեռավար համադրել նվագախմբային նվագակցության հետ:

Նշենք, որ Ա. Խաչատրյանի անվան 16-րդ միջազգային մրցույթի նախընտրական փուլը հաղթահարել է եւ մասնակցելու իրավունք է ստացել 19 ջութակահար: Մասնակիցների աշխարհագրությունը լայն է. նրանք ներկայացնում են Հայաստանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը, Կանադան, Դանիան, Շվեդիան, Թայվանը, Կորեայի Հանրապետությունը, Հոնկոնգը, Ճապոնիան, Ավստրիան և Հունաստանը:

Մրցույթը կկայանա երեք փուլով: Խաչատրյանի անվան 16-րդ միջազգային մրցույթն ազգարարող առցանց համերգի տաղանդավոր ջութակահար Հրայրյա Ավանեսյանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ կկատարի Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Համերգը կհեռարձակվի Հանրային հեռուստատեսությամբ:

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (World Federation of International Music Competitions) անդամ է, մրցույթի կազմակերպիչն է «Արամ Խաչատրյան-մրցույթ» մշակութային հիմնադրամը: Այն տեղի է ունենում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Մրցույթը նպատակ ունի բացահայտել տաղանդաշատ երիտասարդ երաժիշտների, նրանց ընձեռել մասնագիտական առաջընթացի հնարավորություններ, ինչպես նաև մրցույթի միջոցով էլ ավելի հանրայնացնել Արամ Խաչատրյանի արվեստը:

Ա. Խաչատրյանի անվան միջազգային մրցույթն այս տարի անցկացվում է ջութակահարների մասնագիտությանը: Հեռավար կերպով կայանալիք ստուգատեսի ամբողջ ընթացքում կկիրառվեն տեխնոլոգիական մի շարք նորարարություններ: Մասնավորապես, պատրաստվել է մրցույթի թվային մասնակցության ուղեցույցը. այն հասանելի է App Store եւ Google Play հարթակներում: Առաջին անգամ հեռավար ձևաչափով միասին հանդես կգան մենակատարը եւ նվագախումբը: Աննախադեպ գաղափարը կյանքի է կոչվել արհեստական բանականության շնորհիվ: Մրցույթի եզրափակիչ՝ երրորդ փուլում ջութակահարները հեռավար կարող են հանդես եւ գալու նվագախմբի հետ՝ կատարելով Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, Խաչատրյանի Ջութակի կոնցերտի ձայնագրությունը կատարել է երաժիշտների առանձին խմբերով:

Բայց այդ՝ Արամ Խաչատրյանի ծննդյան օրվա առթիվ հունիսի 6-ից Երեւանի տարբեր հատվածներում քաղաքացիներին սպասում են անակնկալներ: Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը նշել է, որ ցանկացած պայմաններում մենք պարտավոր ենք ինչպես մեր հոգեւոր արժեքներն ու տարածել այն: Կորոնավիրուսի տարածման պատճառով ստիպված են եղել փոխել տոնական միջոցառումների ձևաչափը. տուն-թանգարանը, համագործակցելով այս ոլորտում փորձառություն ունեցող «ԱՐԼՈՒՊԱ» կազմակերպության հետ, կներկայացնեն կոմպոզիտորի տասը ստեղծագործությունն ունկնդրելու հնարավորություն: Բջջայինում ներբեռնելով «ԱՐԼՈՒՊԱ» ընկերության անվճար հավելվածը եւ գտնվելով հավելվածի քարտեզում նշված վայրում (օրինակ՝ Հյուսիսային պողոտա, Հանրապետության իրապարակ, Ա. Խաչատրյանի հուշարձան, Ա. Խաչատրյանի փողոց եւ այլն)՝ կարող եք վայելել կոմ-

## Հաստատվել է մշտադիտարկման կարգը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ծրագրերի եւ թեմաների մշտադիտարկման կարգը: Մշտադիտարկման նպատակն է՝ ծրագրի/թեմայի կատարման ընթացքի, ձեռքբերված արդյունքների, ընթացիկ եւ ամփոփիչ հաշվետվություններով ներկայացված տվյալների համապատասխանության ստուգումը ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով նախատեսված առաջադրանքին, օրացուցային պլանին եւ ծախսերի նախահաշվին: Ծրագրի/թեմայի մշտադիտարկումն իրականացվում է հետևյալ փուլերով. 1) կատարման ընթացքի, ձեռքբերված գիտական եւ (կամ) գիտատեխնիկական արդյունքների, ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում. 2) հավաքագրված տվյալների վերլուծություն. 3) հավաքագրված տվյալների եւ դրանց վերլուծության հիման վրա մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքի կազմում. 4) բացահայտված խնդիրների կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների եւ ցուցումների մշակում ու ծրագրի/թեմայի ղեկավարին տրամադրում. 5) մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ շտեմարանի վարում:

Յուրաքանչյուր տարի իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական եւ գիտատեխնիկական գործունեության 16 ծրագրի/թեմայի, այդ թվում՝ բազային ֆինանսավորման առնվազն 6 ծրագիր, նպատակային-ծրագրային ֆինանսավորման առնվազն 2 պետական ծրագիր, պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման առնվազն 8 թեմայի մշտադիտարկում:

Մշտադիտարկում իրականացնելու նպատակով Գիտության կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետում Կոմիտեի ներկայացված փաստաթղթերը, ծրագրի/թեմայի իրականացման ընթացքը եւ յոթ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է համապատասխան վերլուծություն: Գիտության կոմիտեն ծրագրի/թեմայի ղեկավարին է տրամադրում մշտադիտարկման արդյունքում բացահայտված խնդիրների եւ դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները, որն էլ իր հերթին Կոմիտեի է ներկայացնում բացահայտված խնդիրների վերաբերյալ հիմնավորումներ, պարզաբանումներ, ինչպես նաև տեղեկատվություն՝ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին:



Աշխարհի հետ

Օլիմպիադաներ

Շեշտադրված են բնապահպանական գիտելիքները

Հանրապետական ավարտական փուլ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ՅՈՒՆԵՍԿՅ-ի հայաստանյան գրասենյակի հրավերով, միացել է ՄԱԿ-ի շրջակա միջավայրի օրվան նվիրված ՅՈՒՆԵՍԿՅ-ի հայաստանյան գրասենյակի և Ավստրիայի զարգացման գործակալության նախաձեռնությանը, որն այս տարի նվիրված է կենսաբազմազանությանը:

Քննարկման ընթացքում ելույթ են ունեցել նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը:

Քննարկումն անցկացվել է գրույցի ձևաչափով, որի ընթացքում մասնակիցները ներկայացրել են մարզերի և մայրաքաղաքի մի շարք ուսումնական հաստատություններում իրականացված բնապահպանական նախագծերը: Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանի ուսանող Լիդա Մինասյանը ներկայացրել է Էկոպայուսակ նախաձեռնությունը, «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի 8-րդ դասարանի աշակերտ Դավիթ Նավասարդյանը պատմել է սննդի մնացորդների տեսակավորման և վերամշակման մասին իր ուսումնասիրության մասին, Երեւանի թիվ 97 դպրոցի տնօրեն Արմինե Արշակյանը ներկայացրել է դպրոցահեն բնապահպանության և կլիմայի փոփոխության հրահանգները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն իր խոսքում նշել է, որ մոլորակում թեւեւ ոչ համավարակի մարտահրավերը առաջնային է դարձնում կլիմայի փոփոխության և բնապահպանական օրակարգի շուրջ ջանքերի համատեղման հրահանգները: «Ուրախությամբ կարող եմ ասել, որ ներկայումս մշակվող հանրակրթական առարկայական չափորոշիչներում բնապահպանական գիտելիքները հատուկ շեշտադրում են ստանում: Մենք կարելի էր պահպանել մասնաճյուղի բնույթի ճանաչման, բնության հետ ներդաշնակության, բնապահպանական կանոնների պահպանման խնդիրներին: Միաժամանակ համոզված եմ, որ մոլորակի կենսաբազմազանության պահպանման հարցերը չեն կարող իրագործվել միայն ֆորմալ կրթության ճանապարհով: Շատ մեծ անելիք ունեն մարդիկ՝ մոլորակի բնակիչներն ընդհանրապես, քանի որ բոլորը շփվում են հարաբերվում են բնության հետ, հետեւաբար շատ կարեւոր է, որ այդ հարաբերությունները ձեւավորվեն ի նպաստ կենսաբազմազանությանը»,- նշել է նախարարի տեղակալը:



Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի տանիքին դրվել է արեւային կայան, որը բավարարում է Սպիտակի քաղաքապետարանի և մանկապարտեզի էլեկտրաէներգիայի կարիքների 50 տոկոսից ավելին: Սպիտակի մշակույթի տան էլեկտաէներգիայի մատակարարումը եւս արեւային կայանով է կատարվում, զեղարվեստի և երաժշտական դպրոցներում եւս էներգախնայող սարքեր են դրվել:

Ըստ Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա այս տարվա հայեցակարգի՝ Կլիմայի փոփոխությունն առավել շատ ազդում է երեխաների և երիտասարդների վրա: Խոցելի վիճակում գտնվող երեխաների պարագայում առավել մեծ ներդրումներ են հարկավոր, քանի որ նրանք առավել խոցելի են արտաքին ցնցումների հանդեպ և, հետեւաբար, այս ամենը պահանջում է համապարփակ և ինտեգրված լուծումներ: Յուրաքանչյուրն իր դերակատարումն ունի կլիմայի փոփոխությանը պայմանավորված ազդեցությունները մեղմացնելու գործընթացում, ներառյալ քաղաքականություն մշակողները, ուսուցիչները, համայնքի անդամները և դեռահասները:

Ըստ Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա այս տարվա հայեցակարգի՝ Կլիմայի փոփոխությունն առավել շատ ազդում է երեխաների և երիտասարդների վրա: Խոցելի վիճակում գտնվող երեխաների պարագայում առավել մեծ ներդրումներ են հարկավոր, քանի որ նրանք առավել խոցելի են արտաքին ցնցումների հանդեպ և, հետեւաբար, այս ամենը պահանջում է համապարփակ և ինտեգրված լուծումներ: Յուրաքանչյուրն իր դերակատարումն ունի կլիմայի փոփոխությանը պայմանավորված ազդեցությունները մեղմացնելու գործընթացում, ներառյալ քաղաքականություն մշակողները, ուսուցիչները, համայնքի անդամները և դեռահասները:

Բավականին ապացույցներ կան, որ կլիմայի փոփոխությունը ազդում է կենսաբազմազանության վրա: Հագարամյակի էկոհամակարգի գնահատման համաձայն՝ կլիմայի փոփոխությունը, հավանաբար, կդառնա դարի վերջին կենսաբազմազանության կորստի ամենակարեւոր շարժիչներից մեկը: Կլիմայի փոփոխությունն արդեն իսկ ստիպում է կենսաբազմազանությանը հարմարվել բնակավայրի, կյանքի ցիկլերի փոփոխման կամ նոր ֆիզիկական հատկությունների զարգացման մարտահրավերների հետ: Կենսաբազմազանության պահպանումը և կայուն կառավարումը շատ կարեւոր են կլիմայի փոփոխությանը պայմանավորված խնդիրները լուծելու համար:

Ծրագրի իրականացումը կշարունակվի նաև համավարակի ընթացքում

Կորոնավիրուսի համավարակի ընթացքում կշարունակվի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացումը, սակայն «Ճգնաժամային իրավիճակներին արձագանքող դպրոցական սնունդ» ծրագրի տեսքով՝ հիմնական դպրոցների շուրջ 29300 աշակերտների համար:

Այս մասին համատեղ նամակ են ստորագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը և Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) ներկայացուցիչ և գրասենյակի տնօրեն Էլենա Միլոշևիչը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ողջունելով գործընկերների հետ սերտ գործակցությունը, իր գոհունակությունն է հայտնել, որ Պարենի համաշխարհային ծրագրի հետ ծրագրի իրականացման վերանայման արդյունքում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը շարունակվեց նաև 2019-2020թթ.-ի ուսումնական տարվա վերջին, երբ դպրոցներն առկա ուսուցում չէին իրականացնում: Փոխնախարարի խոսքով՝ ԿԳՄՍ նախարարությունը, ՀՀ կառավարության և Պարենի համաշխարհային ծրագրի միջոցով վերջերս ստորագրված համաձայնագրի հիման վրա, ներկայումս պատրաստվում է ընդլայնել համագործակցությունը Պարենի համաշխարհային ծրագրի հետ: «Մոտ ապագայում Պարենի համաշխարհային ծրագրի հետ կստորագրենք մտադրությունների մասին նամակ, որով կսահմանենք համագործակցության նոր սկզբունքներ և մեր գործընկերների հետ ակտիվ կաշխատենք «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրն ավելի մեծ թափով իրականացնելու համար»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը և ընդգծել, որ ՀՀ կառավարությունը կարելու է ծրագիրը և դրանում նոր բաղադրիչների՝ դպրոցներում խոհանոցային ենթակառուցվածքների հետագա զարգացման, տեղական արտադրության մթերքների վրա հիմնված դպրոցական սնունդի տրամադրման և այլ բաղադրիչների ներառումը:

Նշենք, որ «Ճգնաժամային իրավիճակներին արձագանքող դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում Պարենի համաշխարհային ծրագիրը կհատկացնի շուրջ 233 մլն դրամ՝ որպես միանվագ աջակցություն՝ համավարակի պայմաններում ծրագիրը երեւանում և ՀՀ բոլոր մարզերում արդյունավետ իրականացնելու նպատակով: Ծրագրի շահառուներ կդառնան 2020 թ.-ի հունիսի դրությամբ ընտանեկան նպաստի համակարգում ներառված ընտանիքների 6-9 տարեկան երեխաները, որոնցից յուրաքանչյուրի համար 40 օրվա համար կհատկացվի 8 հազարական դրամ: Դրամական կանխիկ փոխանցումները ստանալու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կնույնականացնի շահառուներին՝ ամբողջական ցուցակը փոխանցելով Պարենի համաշխարհային ծրագրի և Կայուն դպրոցական սնունդ հիմնադրամին: Փոխանցումը կիրականացվի նույն սկզբունքով, որով կատարվում է ընտանեկան նպաստի վճարումը:

Չավելենք, որ համաձայն ՀՀ կառավարության և ՊՀԾ-ի միջոցով պայմանավորվածությամբ, 2020թ.-ի հունիսի դրությամբ ՀՀ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի և Արարատի մարզերում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացման հանձնառությունը ստանձնել է ՀՀ կառավարությունը, իսկ մնացած մարզերում ծրագիրն իրականացվում է ՊՀԾ աջակցությամբ: Հայաստանում ծրագրի դրոճը Ռուսաստանի Դաշնությունն է:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա

Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքն ամփոփեց 2019 թ. գործունեության արդյունքները

Հեռավար եղանակով տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովը, որտեղ բաժանմունքի 2019 թ. գիտական եւ գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները ներկայացրեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:



Բաժանմունքի կազմում ընդգրկված են Պատմության, Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի, Հ.Աճառյանի անվան լեզվի, Մ.Աբեղյանի անվան գրականության, Արեւելագիտության, Հնագիտության եւ ազգագրության, Արվեստի ինստիտուտները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը, «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը: Բաժանմունքի կազմում գործում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

կան հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ 4 թեմաներով:

Բաժանմունքի գիտական հաստատությունները ՀՀ ԳԱԱ եւ արտասահմանյան հրատարակչությունների միջոցով հրատարակել են 144 գիրք, որից 7-ը՝ արտասահմանում, 1 հանրագիտարան, 18 դասագիրք եւ ձեռնարկ, 1071 հոդված, որից 288-ը՝ արտասահմանում:

2019 թ. հրատարակվել են «Պատմաբանասիրական հանդեսի», «Բանբեր հայագիտության» եւ «Լրաբեր հասարակական գիտությունների» պարբերականների 3-ական համարներ, «Հայկական տնտեսագիտական հանդես» նոր պարբերականի 1 համար, թողարկվել է «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային անգլերեն հանդեսի 2 համար: Արեւելագիտության ինստիտուտը հրատարակել է «Contemporary Eurasia» անգլերեն պարբերականի VIII հատորի 2 համար, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակել է «Լեզու եւ լեզվաբանություն», Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը՝ «Գրականագիտական հանդես» պարբերականների 2-ական համարներ, Արվեստի ինստիտուտը հրատարակել է «Արվեստագիտական հանդես» նոր պարբերականի 1 համար:

Բաժանմունքն ակտիվորեն մասնակցել է Հովհաննես Թումանյանին եւ Կոմիտասին նվիրված հոբելյանական միջոցառումներին, այդ շրջանակներում կազմակերպել միջազգային գիտաժողովներ («Թումանյանագիտության արդի հիմնախնդիրները» (Երեւան, 18 փետրվարի), «Թումանյան-150» (Երեւան, 21-25 հոկտեմբերի), «Կոմիտաս-150» (Երեւան-Արզակա, 29-30 հոկտեմբերի), «Ազգային դասականությունը համաշխարհային զեղարվեստական համատեքստում» (Հայաստանյայց առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի թեմի հետ համատեղ, Մոսկվա, 20-22 սեպտեմբերի)), հրատարակվել են մի շարք գիտական աշխատություններ, որոնք նոր խոսք են թունանյանագիտության եւ կոմիտասագիտության ասպարեզում:

Ընդհանուր թվով բաժանմունքի գիտական ուղղությունների գծով կազմակերպվել են 31 հանրապետական եւ 22 միջազգային միջոցառումներ:

Հայագիտության եւ հասարակական գիտությունների բնագավառում, ինչպես նշվեց հաշվետու զեկուցման մեջ, առկա են հիմնարար կարեւորագույն արդյունքներ:

Հարունակությունը՝ էջ 7

Մայր Աթոռ

«Աղետը պետք է կանխել, սակայն հնարավոր է կանխել միայն միասնական ջանքերով, համերաշխության մթնոլորտում»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում-քննարկում ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների հետ:



Հանդիպման ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց համավարակի շրջանում Մայր Աթոռի միաբանների եւ թեմերում սպասավորող եկեղեցականների գործունեությանը: Առկա նեղությունների ու խռովակույտ վիճակի պայմաններում կարելի է առավել ջանքերի գործադրումը՝ ամրապնդելու հավատքը, հառնող դժվարությունները Աստուծո օգնությամբ հաղթահարելու հույսը, լավատեսության ոգին եւ սերը հայրենիքի, ազգի ու մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ:

Մեր կյանքի շատ խնդիրներ արժեքային դաշտում են եւ լուծելի են մեր սրբազան արժեքներին հավատարմությամբ, միաբան ու միասնական ընթացքով: Դարերի ընթացքում այս ոգով ենք կարողացել դիմագրավել դժվարությունների ու նեղությունների, գորացնել մեր պետությունն ու ազգային կյանքը: Միաբանությունն է մեր Հայկազյան ազգի ուժն ու զորությունը: Այս ամենում մեծապես կարելու է մեր հոգեւորականների առաքելությունն ու դերակատարությունը:

Դիմելով միաբաններին առաքյալի խոսքով, որն ասում է. «Հաստատուն մնացեք, անշարժ եղեք, ամեն ժամ ավելին եղեք Տիրոջ գործի մեջ» (Ա Կորնթ. 15.57-58)՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց եկեղեցականությանը հոգեւոր խնամատարությամբ, առավել եռանդուն քարոզչական գործունեությամբ, աստվածային պատվիրանների եւ Սուրբ Գրոց ուսուցման մատուցմամբ, Քրիստոսի վարդապետության ջանքումով շարունակել իրենց սպասավորությունը՝ պայքար մղելով նաեւ ժողովրդի կյանքում տեղ գտնող անվայելուչ եւ մերժելի երեւույթների դեմ:

Րացնել մեր պետականությունը, առաջընթացի նոր ուղիներով առաջնորդել երկիր հայրենին: Այս առումով Մենք ցավով ենք անդրադառնում հայրենական մեր կյանքում, ի մասնավորի նաեւ համացանցի տիրույթում հաստատված անցանկալի մթնոլորտին, որտեղ սփռվում են վիրավորանք ու թշնամանք, ոտնահարվում են արժեք ու սրբություն: Սուրբ Գիրքն ասում է. «Հակառակությունն ատելություն է գրգռում, բայց սերը ծածկում է ամեն մի ներհակություն» (Առակ. 10.12): Մենք՝ որպես հոգեւոր հայրեր, պետք է ամուր պահենք մեր ժողովրդի զավակների մեջ գիտակցությունը, որ հայրենիքի գարգացման տեսլականի շուրջ տարբեր պատկերացումները չառաջնորդեն անհանդուրժողության ու բռնության արարքների, քաղաքական հայացքները եւ տարածայնությունները պատճառ դառնան ազգային միասնության պառակտումի:

Հարկ է հաստատուն պահել բարեկրթության, պարկեշտության եւ փոխադարձ հարգանքի սահմանները, որովհետեւ արդարության, բարոյության հաստատունը հասարակության կյանքում չի կարող իրականացվել անպատշաճ արտահայտչաձեւերով եւ թշնամանքի հրահրմամբ: Ներկա իրավիճակը եւ երկրի առջեւ ծառայած մարտահրավերները չպետք է տեղիք տան առաքինի ընթացքի եւ դիմացինի հանդեպ հարգանքի ու հանդուրժողականության նախաճի, իրավունքների ու արժանապատվության ոտնահարման եւ տկարացման առ հայրենին սիրո ու նվիրումի ոգին: Ամենքը պետք է ունկնդիր լինեն առաքյալի խրատին, որն ասում է. «Ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ՝ պարկեշտությամբ, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբավով, ինչ որ՝ առաքինությամբ, ինչ որ՝ զովությամբ, - այն խորհեցեք» (Փիլիպ. 4.8):

Նորին Արքեպիսկոպոսը նաեւ խոսեց համավարակի պայմաններում եկեղեցականների առաքելության մասին: «Սիրելիներ, այսօր՝ համավարակի այս իրավիճակում, հրամայական է էլ ավելի կազմակերպել եւ ինքնակազմակերպվել: Մայր Եկեղեցին իր հոգեւոր դասով այս առումով կարելու արժեքային պատանքն է: Շարունակաբար սատար կանգնելով հայրենի պետության ջանքերին՝ մենք պարտավոր ենք ուղղորդել մեր հավատավոր զավակներին ու կոչ անել, որպեսզի թե եկեղեցիներ, թե՛ ուխտատեղիներ եւ այլուր այցելելիս խստորեն հետեւեն պատկան կառույցների սահմանած կանոններին: Պետք է բարձրացնենք յուրաքանչյուր անհատի՝ այլոց կյանքի անվտանգության համար պատասխանատվության գիտակցությունը: Այսօր չունենք ավելի կարելու իրամայական, քան վարակի տարածման կանխարգելումը, որպեսզի վերադառնանք մեր բնականոն կյանքի ընթացքին:

Այս իմաստով մեր հոգեւոր սպասավորները Սփյուռքի թեմերում մույնպես պետք է համապատասխան կոչերով ուղղորդեն եւ ապահովագրեն մեր զավակներին, որ նրանք խստագույնս հետեւեն իրենց երկրների պատկան մարմինների առողջապահական հրահանգներին: Աղետը պետք է կանխել, սակայն հնարավոր է կանխել միայն միասնական ջանքերով, համերաշխության մթնոլորտում», - ասաց Վեհափառ Հայրապետը:

# Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքն ամփոփեց 2019 թ. գործունեության արդյունքները

սկզբը՝ էջ 6

## Պատմության ինստիտուտ

«Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչեւ 1918 թ.» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ ակադեմիկոս Ա. Մելքոնյան) աղբյուրագիտական լայն հենքի վրա ուսումնասիրվել է արեւմտահայ հասարակական-քաղաքական կյանքը 1917–1918 թթ., մասնավորապես Անդրկովկասի իշխանությունների՝ Կոմիսարիատի եւ Սեյմի, հայկական ազգային մարմինների, կուսակցությունների, առանձին անհատների վարած ռազմա-քաղաքական գործունեության արդյունքով էրզրումի պաշտպանության եւ անկամ պատճառների հիմնահարցը:



«Հայաստանը եւ հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց եւ Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր Կ. Խաչատրյան) արխիվային փաստաթղթերի, ակնատեսների վկայությունների, մամուլի նյութերի եւ տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել են ցեղասպանության իրազորմանը հայ ժողովրդին հասցված տարածքային, ժողովրդագրական, մշակութային եւ նյութական կորուստները, որոշակիացվել դրանց ծա-

վայներն ու հետեւանքները, ինչպես նաեւ առաջարկներ արվել Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման՝ հատուցման գործընթացի կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերի վերաբերյալ: Աշխատանքն իրականացվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակի Համահայկական հռչակագրի ընդունմից հետո ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական խմբի կողմից:

## Արեւելագիտության ինստիտուտ



«Թուրքիայի, Իրանի, Կովկասի եւ Սաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային եւ էթնիկական պատմության հիմնախնդիրները եւ Հայաստանը» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյան) առաջին անգամ ցույց է տրվել, որ Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմի նախապատրաստումը սկզբ էր առել դեռեւս 1920 թ. փետրվարին՝ Մուստաֆա Քեմալի անձնական նախաձեռնությամբ: Տրվել են նաեւ Քեմալի գաղափարական հայացքները եւ քաղաքական գործունեության այն կողմերը, որոնք հնարավորություն են տալիս առավել հիմնավոր պատկերացում կազմելու նրա քաղաքականության իրական շարժառիթների մասին: Այս ամենը, թուրքական սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննության հիման վրա, իր տեղն է գտել ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի հեղինակած մենագրությունում, որտեղ ներկայացվել է նաեւ Թուրքիայի Հանրապե-

տության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի գործունեությունը 1919-1921 թթ., որը հնարավորություն է տալիս ամբողջականորեն վեր հանելու նաեւ այդ գործչի ընդգծված հակահայկական, ծայրահեղ ազգայնամոլական հայացքները: Մենագրությունը կարելի էր դնել նաեւ Թուրքիայի Հանրապետության հիմնադրի հակահայ գործունեության հետագա, ավելի խորը ուսումնասիրման գործուն: Ծրագրի շրջանակներում քեմալիզմի եւ ֆաշիզմի համեմատական հետազոտումը նույնպես նորույթ է թուրքագիտական գրականության մեջ:

«Միջազգային հարաբերությունները Մերձավոր եւ Միջին Արեւելքում, Արեւելյան Ասիայում, Հարավային Կովկասում եւ Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ թղթակից անդամ Ն. Հովհաննիսյան) ուսումնասիրման առարկա են դարձել նաեւ կարելի արդիական նշանակություն ունեցող մի շարք հիմնախնդիրներ՝ սուննի-շիա հակամարտությունը Մերձավոր Արեւելքում, սիրիացի փախստականների ճգնաժամը եւ մերձավորարեւելյան երկրները վերափոխվող տարածաշրջանային գործընթացներում եւ այլն: Այս հիմնահարցերի վերաբերյալ իրատարակվել են աշխատություններ, անց են կացվել միջազգային գիտաժողովներ, կլոր-սեղան քննարկումներ, որոնց մասնակցել են նաեւ մերձավորարեւելյան տարբեր երկրների գիտնականներ, վերլուծաբաններ, ՀՀ-ում այդ երկրների դեսպանները, ՀՀ պատկան մարմինների ներկայացուցիչները:



## Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ

«Հայ հնագիտության, ազգագրության եւ բանագիտության արդի եւ հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ ԳԱԱ թղթակից անդամ Պ. Ավետիսյան)



ա. «Հայաստանի պատմամշակութային ժառանգության հնագիտական ուսումնասիրություն» ենթաժողովով Հրազդանի կիրճի՝ քարի դարի քարայրներն ուսումնասիրող միջազգային գիտահետազոտական խումբը երկրաքիմիական անալիզների նորագույն մեթոդների կիրառմամբ առաջին անգամ փաստագրել է, որ նեանդերթալյան մարդը ոչ միայն օգտագործել է կրակը, այլեւ տիրապետել են այն արհեստականորեն ստանալու հմտությանը: Մինչ այս ընդունված էր այն տեսակետը, որ կրակ ստանալն անատմիապես ժամանակակից մարդու՝ Homo sapiens-ի «մենաշնորհն» է եղել: Մասնավորապես Լուսակերտ-1 քարայրի մշակութային նստվածքների անալիզներով պարզվել է բազմափուլի անուշաբույր ածխաջրածինների (ԲԱԱ-ներ կամ PAHs) խտությունը, որոնք առաջանում են օրգանական ծագում ունեցող նյութերի այրման ընթացքում: ԲԱԱ-ների մի տիպը, այսպես կոչվող թեթեւ ԲԱԱ-ները ցրվում են լայն շառավղով եւ վայրում են վայրի կամ բնական ծագմամբ իրոզիի մասին, մինչդեռ մյուսները, որոնք կոչվում են ծանր ԲԱԱ-ներ, ավելի սահմանափակ ցրում ունեն եւ կուտակվում են կրակի օջախին շատ ավելի մոտ: Ինչպես ցույց են տալիս քարայրի նստվածքները, մարդկային գործունեության վկայությունների (կենդանիների ոսկրային մնացորդների կուտակումներ, դրանց հարեւանությամբ աշխատանքային գործիքների պատրաստման մասին վկայող գտածոներ) առող հաճախականությունը համընկնում է կրակի օգտագործման եւ ծանր ԲԱԱ-ների հաճախակա-

նության աճի հետ: Հնակլիմայական տվյալների վերլուծությամբ փաստագրվել է նաեւ, որ քարայրի հնաբնակները չեն ապրել չոր, բնական հրդեհների համար նպաստավոր պայմաններում: Կրակի հետ նախամարդու փոխհարաբերության հնագիտական, ածխաջրածնային, իզոտոպային եւ հնակլիմայական տվյալների այս համալիր ուսումնասիրությունը, որ հրատարակվել է «Nature Scientific Reports» ամսագրում, վկայում է, որ նեանդերթալյան մարդն արհեստական կրակ է ստացել, ինչը նոր խոսք է մարդագոյացման հիմնախնդիրների ուսումնասիրության ոլորտում (ղեկավար՝ Բ. Գասպարյան):

բ. Հայ-գերմանական «Արտաքսատա» ծրագրով հաշվետու տարում հայտնաբերվել են Արտաշատի ջրամատակարարման համակարգի մաս կազմող ակվեդուկի հիմնամույթերը: Շուրջ 1 կմ գծի երկայնքով փաստագրված 20 կամարակալները վկայում են աննախադեպ ծավալներ ունեցող ինժեներական կառույցի մասին, որն ըստ ամենայնի կառուցվել է 114-117 թթ. Հռոմի Տրայանոս կայսեր կողմից (ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու Ս. Զարդարյան):



## Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ



«Ընդհանուր ու համեմատական եւ կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Համբարձումյան) քննության են ենթարկվել հայերենի եւ կելտական լեզուների առնչությունները, մասնավորապես հնչյունական եւ բառային զուգաբանությունները՝ ըստ հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների տվյալների: Հայ-կելտական լեզվական առնչություններին նման անդրադարձը խիստ կարելի է հնդեվրոպական լեզուների համեմատական եւ տիպաբանա-

կան ուսումնասիրության համար, մասնավորապես՝ հայերենի նախագրային շրջանի պատմության շատ հարցերի նորույթի լուսաբանման տեսանկյունից: Հետազոտության արդյունքներն ամփոփված են Վ. Համբարձումյանի «Հայերենը եւ կելտական լեզուները» աշխատությունում:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվայան) մեծ ծավալի աշխատանք է կատարվել բարբառային միավորների ուսումնասիրությունը համալրելու ուղղությամբ. հետազոտվել եւ նկարագրվել են Ակնի բարբառի, Տրապիզոնի, Բալլուի, Խուռնավուլի, Կարբիի խոսվածքները, առաջադրվել է բարբառային հայերենում հարացուցային հնաբանությունների առանձնացման եւ մեկնաբանման հարցը, կարելի է գեղարվեստական խոսքը իբրեւ բարբառային լեզվի ուսումնասիրության աղբյուր: Հետազոտությունների արդյունքները ներկայացված են գիտական հոդվածներում եւ զեկուցումներում:

շարունակությունը՝ էջ 8

# Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքն ամփոփեց 2019 թ. գործունեության արդյունքները

սկզբը՝ էջ 7

## Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

«Հայ գրականության պատմություն» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Դեռիկյան) ուսումնասիրվել եւ հրատարակվել է «Нахичеван в записках европейских путешественников (XIII-XVII вв.)» (հեղինակ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Կարազոյան) աշխատանքը: Մենագրության մեջ ցույց է տրվել, թե ուղեգրողները ինչպես են որպես սկզբնաղբյուրներ օգտագործել հայ միջնադարյան գրականության եւ ժողովրդական ավանդությունների տվյալները: Ընդգծվել է հատկապես այն միտքը, որ եվրոպական ճանապարհորդները Նախիջեւանը համարել են պատմական Հայաստանի մասը:



Հավաքվել եւ առանձին գրքով տպագրվել են Հայոց այրուբենին նվիրված հայ միջնադարյան գրականության մեջ եղած բնագրերը՝ ըստ ժամանակագրական ընթացքի եւ ժանրային բաժանման: Ներկայացվող բնագրերը ենթարկվել են պատմագիտական, գրականագիտական եւ աստվածաբանական վերլուծությունների, ինչպես նաեւ ուսումնասիրվել են ժամանակի ազգային-քաղաքական ըմբռումների եւ միջնադարյան սինվոլիկայի տեսանկյունից: Կազմվել եւ առաջին անգամ հրատարակվել է Հովհաննես Թումանյանի ամբողջական կենսագրությունը (ռուսերեն) (հեղինակ՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Հովհաննիսյան)՝ սկսած բանաստեղծի տոհմի մասին տեղեկություններից մինչեւ վախճանմանը հաջորդած հիշատակի խոսքերը: Գրքում Թումանյանի գործունեությունը եւ գրական ժառանգությունը վերլուծվել է ժամանակի պատմության համատեքստում, որով աշխատանքը ձեռք է բերել նաեւ պատմագիտական կարեւորություն, քանի որ Թումանյանի գործունեության միջոցով ներկայացվել են ժամանակի պատմամշակութային, այդ թվում՝ հայ-ռուսական եւ հայ-վրացական գրական կապերի մի շարք կարեւոր իրադարձություններ:

## Փիլիսոփայության, սոցիոլոգիայի եւ իրավունքի ինստիտուտ



«Հայ իրականության պատմափիլիսոփայական, սոցիալ-քաղաքական եւ իրավագիտական ուսումնասիրություններ» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ղազանչյան) կատարվել են հետազոտություններ գիտական չորս ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն): Իրականացվել են միջգիտակարգային հետազոտություններ՝ նվիրված արդի «անհատ-պետություն-հասարակություն» փոխհարաբերություններում առկա հիմնախնդիրներին, այդ թվում՝ դատաիրավական բարեփոխումներին, միգրացիոն գործընթացներին, հայ ընտանիքի ինստիտուտի կայունացմանը, նոր կառավարության քաղաքականության նկատմամբ հասարակական կարծիքի բացահայտմանը, տարածաշրջանում առկա գեոստրատեգիական զարգացումների խորքային գործընթացների վերլուծությանը: Համակարգված տեսական վերլուծության են ենթարկվել լեզվի եւ իմաստի կառուցվածքային եւ գործառնության բազմազան դրսևորումները: Աշխատանքներ են կատարվել՝ նվիրված հայ փիլիսոփայության ակնաձայն գործիչների ժառանգության հայեցակարգերի բացահայտմանն ու հանգամանալից վերլուծությանը: Մասնավորապես, բազմաձայն գիտական հետազոտությունների եւ մշակումների արդյունքով գիտական հանրությանն են ներկայացվել հայ մանկավարժական մտքի գոհարները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչեւ 18-րդ դարը: Հրատարակվել է «Հայ մանկավարժական մտքի անթոլոգիա» մենագրությունը, որտեղ քննարկված, համակարգված եւ վերլուծաբար ներկայացված են ինչպես հայտնի, այնպես էլ անհիմն մոռացության տրված հայ հոգեւոր եւ աշխարհիկ մտավորականության ներկայացուցիչների մանկավարժական գաղափարները:



## Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ



ԵՏՍ ընդհանուր շուկայում, ընդլայնվել է ՀՀ արտահանման ծավալը եւ դիվերսիֆիկացիան: Վերլուծվել է նաեւ ՕՈՒՆ ներհոսքի դինամիկան՝ ԵՏՍ անդամակցությունից առաջ եւ հետո, ինչի արդյունքով պարզվել է, որ ԵՏՍ անդամակցությունը դեռեւս որեւէ որոշակի ազդեցություն չի ունեցել ՕՈՒՆ ներգրավման վրա եւ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ներհոսքը կրում է անկայուն բնույթ:

«Հայաստանի էներգետիկ անվտանգության հիմնախնդիրները արդի տնտեսական եւ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տնտեսական գիտությունների թեկնածու Յ. Սարկոսյան) վերլուծվել են տնտեսական անվտանգության համակարգում էներգետիկ անվտանգության հայեցակարգը, ՀՀ էներգետիկ անվտանգության մարտահրավերները, զարգացման հեռանկարները եւ կապը էներգետիկ անվտանգության ապահովման հետ: Բացահայտվել են էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման գործիքակազմի կիրառման հնարավոր հեռանկարները Հայաստանում: Կարեւորվել է էներգաարդյունավետության եւ էներգիայի պահանջարկի նվազեցմանն ուղղված ոչ տնտեսական մեխանիզմների ներդրումը:

«Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցության հետեւանքների գնահատումը եւ հետագա հնարավոր զարգացումները» թեմայի շրջանակներում (ղեկավար՝ տնտեսական գիտությունների թեկնածու Լ. Սարգսյան) վերլուծվել է ՀՀ արտահանումը դեպի ԵՏՍ շուկա՝ ըստ ապրանքների մրցունակության, ինչի արդյունքով բացահայտվել է արտահանման դինամիկայի հստակ արտահայտված միտում. նոր իրողության պայմաններում, շնորհիվ մաքսային եւ այլ փոփոխությունների՝ մեծացել են ՀՀ ապրանքների համեմատական եւ մրցակցային առավելությունները:


## Արվեստի ինստիտուտ

«Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում (ղեկավար՝ թղթակից անդամ Ա. Աղասյան) հայ ակնավոր երաժիշտ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ հրատարակվել եւ հրատարակության են նախապատրաստել մի շարք գիտական աշխատություններ, որոնց արդյունքները նոր խոսք ու կարեւոր հանգրվան են կոմիտասագիտության ասպարեզում: «Կոմիտասական» ժողովածուի 3-րդ հատորում (խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր Ա. Ասատրյան), ինչպես եւ նախորդ երկու հատորներում, ընդգրկվել են հոդվածներ եւ ուսումնասիրություններ՝ նվիրված Կոմիտասի կյանքին, նրա ստեղծագործությանը, երաժշտագիտական հետազոտություններին ու կատարողական արվեստին: Արժեւորվել է Կոմիտասի ժառանգության դերն ու նշանակությունը հայ երաժշտարվեստի հետագա զարգացման գործում: Բացահայտվել է Կոմիտասի կերպարը ոչ միայն հայ երաժշտության, այլեւ գրականության մեջ եւ կերպարվեստում:



Հայ արվեստաբանության մեջ առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրվել են հայ կերպարվեստում Կոմիտասին նվիրված մի քանի տասնյակ ստեղծագործություններ, այդ թվում՝ Հայաստանում եւ այլ երկրներում տեղադրված, նրա հիշատակը հավերժացնող հուշարձանները: Լույս է տեսել թղթակից անդամ Ա. Աղասյանի «Կոմիտասը հայ նկարիչների եւ քանդակագործների աչքերով» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրքը, որտեղ ներկայացված աշխատանքներն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային եւ վավերագրական նշանակություն: Հրատարակվել է թղթակից անդամ Վ. Ղազարյանի եւ արվեստագիտության դոկտոր Յ. Հակոբյանի «Հայկական մանրանկարչություն. սկզբնավորումն եւ զարգացման ընթացքը» մենագրությունը, որտեղ հեղինակներն անդրադարձել են հայկական մանրանկարչության առավել արժեքավոր նմուշներին, բացահայտել դրանց թեմատիկ, պատկերային ու ռեալիստիկ առանձնահատկությունները, շրջանառության մեջ դրել նորահայտ նյութեր:

շարունակությունը՝ էջ 9







Հանրային քննարկում

Կրթությունից դուրս մնացածների հայտնաբերման եւ կրթության մեջ ներառման մեխանիզմներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել պարտադիր կրթությունից դուրս մնացած դպրոցահասակ երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգի նախագիծը: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախատեսվում է նոր ուսումնական տարվանից ներդնել կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման (կրթության մեջ ներառման) գործուն համակարգ:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ հոգաբարձության մարմին: Նման տեղեկություններ ստանալուն պես խնամակալության եւ հոգաբարձության մարմինը պետք է ձեռնարկի երեխայի իրավունքների եւ շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ:

Տեղական ինքնակառավարման մասին օրենքում, սակայն, արտացոլված չէ համայնքի այդ պարտականությունը: Մարզպետարանների համապատասխան բաժինների ինստիտուցիոնալ կարողությունները չեն բավականացնում այդ գործառույթը լիովին իրականացնելու համար: Սոցիալական ծառայության տարածքային մարմինների կանոնադրության մեջ նույնպես ամրագրված չէ նման գործառույթ, սակայն ինտեգրված ծառայությունների բարեփոխման համատեքստում նպատակային կլինի դեպքի ՍԾ համակարգի նոր մասնագետների՝ դեպք վարողների ներգրավումը:

Միևնույն ժամանակ, կանոնակարգված չէ նաև դպրոցահասակ երեխաների հաշվառման գործընթացը, որի հետևանքով անհասկանալի է տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունների իրականացումը երեխաների՝ հանրակրթության մեջ ընդգրկման խնդրում:

Կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթության մեջ ներգրավման համար առաջարկվող լուծումներն են՝ դպրոցահասակ երեխաներին կրթությունից դուրս մնալը կանխելը, ուսումնական հաստատությունից դուրս մնացած երեխաների վաղ բացահայտելը եւ դրանց վերացման համար միջոցներ ձեռնարկելը, երեխայի ուսումնառությունը համապատասխան ուսումնական հաստատությունում ապահովելը:

Նշված հարցերի իրականացման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝ դպրոցահասակ երեխաների հաշվառում, ուսումնական հաստատությունից դուրս մնացած երեխաների բացահայտում եւ դուրս մնալու պատճառների բացահայտում, ըստ անհրաժեշտության անհատական ուսուցման պլանի մշակում եւ իրականացում, երեխայի ուղղորդում համապատասխան ուսումնական հաստատություն:

Համաձայն նախագծի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, ինչպես նաև որոշակի պարբերականությամբ տարվա ընթացքում՝ համեմատվելու են բնակչության պետական ռեգիստրի եւ դպրոցների կառավարման համակարգի տվյալները եւ «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներկայացվելու են հանրակրթության մեջ ընդգրկման ենթակա տարիքի այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն: Համադրված ցուցակները հասանելի են լինելու բոլոր պատասխանատու կառույցներին: Համայնքի ղեկավարը եւ տարածքի սոցիալական ծառայությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում քայլեր են ձեռնարկելու նշված երեխաների կարգավիճակը ճշտելու, ուսումնական հաստատությանը չդիմելու պատճառները բացահայտելու, սոցիալական դեպք վարելու համար՝ ապահովելով երեխայի դպրոց հաճախելը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու դեպքում կազմակերպվելու է երեխայի կարիքների գնահատումը համապատասխան կառույցների հետ:

տումը համապատասխան կառույցների կողմից: Սա էապես կնպաստի նաև հաշմանդամություն ունեցող երեխաների՝ կրթության մեջ ներառվելու առավել ամբողջական երաշխավորմանը:

Տարվա ընթացքում, եթե երեխան ուսումնական հաստատություն չի հաճախի 5 աշխատանքային օր անընդմեջ, դպրոցը էլեկտրոնային համակարգում կկատարի համապատասխան գրառում (ստեղծում է հայտ)՝ նշելով բացակայության պատճառը: Եթե դպրոցը որպես բացակայության պատճառ նշի սովորողի հիվանդությունը, ապա այդ հայտը տեսանելի կդառնա նաև այն բժշկական հաստատություններին, որտեղ հաշվառված է տվյալ երեխան: Բժշկական հաստատությունը կարող է հաստատել կամ մերժել դպրոցի կողմից բացված հայտը՝ նաև նշելով, թե երբ երեխան արդեն կարող է հաճախել ուսումնական հաստատություն: Այս դեպքում դպրոցը եւս նշում կկատարի, որ երեխան արդեն հաճախում է ուսումնական հաստատություն: Այս ամբողջ տեղեկատվությունը հասանելի է լինելու նաև սոցիալական դեպք վարողին: Սոցիալական դեպք վարողը կարող է նաև հայտ բացել՝ անկախ պատճառից, եթե գործունեության ընթացքում հայտնաբերել է, որ որևէ երեխա չի հաճախում դպրոց: Այս ամենը իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով, ինքնաշխատ եղանակով: Համակարգի գործարկումը որպես հետևանք կունենա ոչ միայն երեխաների՝ ուսումնական տարվա ընթացքում դպրոցից դուրս մնալու դեպքերի կանխարգելմանը, այլ նաև կբարելավի երեխաների առողջության պահպանման գործընթացը՝ մեծացնելով բժշկական օգնության եւ սպասարկման հաստատությունների կողմից երեխաների

առողջական խնդիրներին հետևելու, իրական վերահսկողություն եւ ըստ կարիքի բուժում իրականացնելու հարցերը: Սոցիալական ծառայությունների հետ կապը կբարելավի երեխաների համար ընդհանուր առմամբ անվտանգ ու բարենպաստ միջավայրի ապահովմանն ուղղված գործընթացները:

Բացի դպրոցում ֆորմալ ընդգրկվածության հարցից, նախատեսվում է դպրոցներում կանոնակարգել նաև երկարօրյա ուսուցման խմբերի կազմակերպումը՝ նախարարի համապատասխան հրամանով եւ լուծելով մի շարք խնդիրներ, այդ թվում՝ դպրոց ֆորմալ հաճախող, սակայն ուսուցման գործընթացում ըստ էության չընդգրկվող երեխաներին հավելյալ աջակցության խնդիրը, որը թույլ կտա նրանց գրանցել ավելի մեծ առաջընթաց սովորելու ընթացքում՝ մեծացնելով հետապոյան մասնագիտական կրթության ստանալու, իրենց կարողություններն ու ինքնադրսեւորման հնարավորությունները զարգացնելու համար: Այս գործընթացում նախատեսվում է ներգրավվել նաև թոշակի անցած ուսուցիչներին՝ օգտագործելով վերջիններիս ներուժն ու բազմաթիվ փորձառությունը երեխաներին կրթելու եւ աջակցելու ուղղությամբ: Երկարօրյա խմբերի կազմակերպման միջոցով նախատեսվում է լուծել նաև տնային պայմաններում երեխայի խնամքի եւ կրթական աջակցության անհնարինության դեպքում՝ դպրոցի բազայի հիման վրա այդ գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների եւ սոցիալական աջակցության կարիք ունեցող սովորողների ներառման սկզբունքի հիման վրա լրացուցիչ կրթական եւ սոցիալական ծառայություններ մատուցելը:

Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքն ամփոփեց 2019 թ. գործունեության արդյունքները

սկիզբը՝ էջ 8

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

«Շիրակի հնագիտական եւ պատմագագարական ուսումնասիրություններ-2» թեմայի (ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու Ա. Հայրապետյան) շրջանակներում՝



ա. Մեծ Սեպասարում պեղումների արդյունքով հայտնաբերվել են ամպրոպի աստ-ծուն եւ պտղաբերության աստվածուհուն խորհրդաշող կոթողներ, որոնց ծիսական խորհուրդը աշխարհի բնականոն եւ անխափան գոյատևման ապահովումն էր, ինչը իրականացվում էր առ երկինք ուղղված նվիրաբերում-գոհաբերություններով՝ երկրի վրա մարդկանց, կենդանիների ու հողի համար պտղաբերում եւ հովանավորություն ստանալու նպատակով:

նին բնորոշ, բարձրորակ ջարդված խեցեղեն եւ բաժակներ, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ Աբեմենյան թագավորության վերելքի շրջանում ազատանցիների վերնախավը փորձել է ընդունել զավթիչների կենսակերպը:

Ազատանի ամրոց-բնակավայր-դամբարանադաշտի արեւելյան հատվածում հայգերմանական համատեղ արշավախմբի կատարած պեղումների արդյունքով հայտնաբերվել է աբեմենյան ժամանակաշրջանի

բ. Հիմնովին ժխտվել է արեւելագիտության մեջ իշխած այն կարծիքը, թե Հայկական էռնաշխարհի հյուսիս-արեւելյան կե-

սի բնակիչ ցեղերի մեծ մասը նախաուրարտական եւ ուրարտական դարաշրջաններում ունեցել են խուռիական ծագում կամ ազգակից են եղել խուռի-ուրարտական ցեղերին եւ նույնիսկ ունեցել են (զոնե մասամբ) քարթվեական ծագում: Տեղանկանական տվյալները են դրանցում արտացոլված պաշտամունքային ոլորտի պատկերացումները խոսում են տեղի բնակչության հնդեվրոպական ծագման մասին:

«Հայկական հանրագիտարան» հրատարակչություն

«Հրատարակվել է «Հայ երաժշտության հանրագիտարանը» (ղեկավար՝ քիմիական գիտությունների դոկտոր Գ. Այվազյան):



Բաժանմունքի գիտական հաստատությունները կատարել են նաև կիրառական բնութի ծավալուն աշխատանքներ, մշակել բազմաթիվ առաջարկներ, պատրաստել մի շարք գիտավերլուծական նյութեր, որոնք ներկայացվել են համապատասխան գերատեսչական մարմիններին:

Բաժանմունքի տարեկան ընդհանուր ժողովում ընդունված որոշման մեջ նախանշվեցին բաժանմունքի կազմում ընդգրկված գիտական հաստատությունների առաջիկա անելիքները:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Լուսաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Չեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Սեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հուլիսի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հուլիսի 10-ին՝ ժամը 14:00-ին, Շիրակի մարզի Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Գ. Լուսաղբյուր, 4-րդ փողոց, շենք 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 73-60-10 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Մրգաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկոսությանի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Չեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Չեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Սեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հուլիսի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հուլիսի 10-ին՝ ժամը 12:00-ին, Կոտայքի մարզի Մրգաշենի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Գ. Մրգաշեն, 2-րդ փողոց, 1-ին փակուղի, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 6-34-20 կամ (098) 65-43-28 հեռախոսահամարներով:

Անձայն տիեզերք, շառաչող տիեզերք

«Տիեզերքի ողջ այժմյան կառուցվածքը յուրօրինակ արձագանքն է այն ծայնային ալիքների, որոնք ուղեկցում են Տիեզերքին նրա լայնացման սկզբից ի վեր: Դրանք այդ ճայթացող որոտների տարածումն են արձանագրում, որ հնչել են այն ժամանակ»:


Ի. Նովիկով, Վ. Լուկաս

Ներկայումս հանընդհանուր ճանաչում ունի կոսմոլոգիական մոդել, համաձայն որի՝ Տիեզերքը ծնունդ է առել մոտ 13,8 մլրդ տարի առաջ՝ ինչ-որ սինգուլյար վիճակից (երբ էներգիայի խտությունը եւ տարածություն-ժամանակի կորությունը չափազանց մեծ էին՝ պլանկյան արժեքների կարգի. երկարություն՝ 10-35մ, ժամանակ՝ 10-43վ) եւ առ այսօր անընդհատ ընդարձակվում է ու սառչում:

Տիեզերքի՝ անմիջականորեն դիտման ենթակա սահմանները միշտ վերջավոր են. մենք անկախ գործիքների կատարելիության աստիճանից, չենք կարող տեսնել օբյեկտներ, որոնք այնպիսի հեռավորությունների վրա են, որ լույսը չի կարողացել հաղթահարել Տիեզերքի գոյության ընթացքում: Այդ պատճառով խոսում են «տեսանելիության հորիզոնի» մասին:

Տիեզերքի ծերացմանը զուգընթաց՝ օպտիկական հորիզոնը աստիճանաբար հեռանում է: Լայնացող Տիեզերքի ցանկացած փուլում կան այնպիսի կետեր, որոնց հեռավորությունը գերազանցում է օպտիկական հորիզոնը: Այդպիսի կետերի միջեւ չի կարող լինել ոչ մի պատճառական կապ: Իսկ ինֆորմացիան, որը պարունակվում է էլեկտրամագնիսական ճառագայթներում, խոսում է այն մասին, որ տեսանելի Տիեզերքի մատերիայի վիճակը ընդհուպ մինչեւ նրա ծայրահեղ հեռու տիրույթները՝ մոտավորապես միատեսակ է: Դա չափազանց հանելուկային է, քանի որ ընդլայնվող Տիեզերքում դժվար է պատկերացնել անհամասեռության հավասարեցման ֆիզիկական որել մեխանիզմ: Գուցե իրադարձությունները, որոնք հանգեցրել են ընդարձակվող Տիեզերքի ֆիզիկական պայմանների հավասարեցմանը, ձեւավորվել են նրա գոյության հենց ամենավաղ փուլերում: Բացառված չէ, որ բոլոր հանելուկները իրենց բացատրությունը կգտնեն, երբ կհասկանանք, թե ինչ են մութ էներգիան, մութ մատերիան, տիեզերական վակուումը:

Վակուումը ֆիզիկայի արդի պատկերացումներով բոլոր ֆիզիկական դաշտերի ամենատարիմ էներգետիկ մակարդակն է, որում չկան իրական մասնիկներ: Բայց միևնույն ժամանակ՝ այն որոշակի պայմաններում կարող է ծնել իրական մասնիկներ, ընդ որում՝ առանց խախտելու պահպանման օրենքները: Վակուումը նաեւ գրավիտացիոն հատկություններ ունի: Բայց այդ գրավիտացիային, ի տարբերություն սովորականի, համապատասխանում են ոչ թե ձգողության, այլ վանողության ուժերը, եւ այն փոխվում է հեռավորության առաջին աստիճանից կախված:



ությունը առաջին աստիճանից կախված:

Տիեզերքի լայնացման ժամանակ եղել է պահ, երբ վակուումի գրավիտացիան գերազանցել է սովորական նյութի գրավիտացիային, եւ դա (կամ՝ գերհասնելուկային մութ էներգիան) հանգեցրել է արագացող ընդարձակմանը, Տիեզերքի «փքմանը»՝ ջերմաստիճանի աճող անկմանը ու խտության կտրուկ փոքրացմանը:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, ուսումնասիրելով Տիեզերքի ոչ ստացիոնար երեւույթները, այն միտքն է հայտնել, որ դրանց բացատրման համար հնարավոր է, որ պետք է փոխվեն ժամանակակից տեսական ֆիզիկայի որոշ պատկերացումներ, եւ, առաջին հերթին, բարիոնային լիցքի պահպանման օրենքը: Այդ միտքը հաստատում է նաեւ Տիեզերքում նկատվող լիցքային անհամաչափությունը: (Բարիոնները տարրական մասնիկներ են, որ կազմված են երեք կամ հինգ թվարկներից: Դրանց թվին են պատկանում՝ պրոտոնները, նեյտրոնները, հիպերոնները: Բարիոնները մեզոնների հետ միասին (սրանց կազմված են զույգ թվով թվարկներից) կազմում են հաղորդները, որոնք ատոմային միջուկի չափերի կարգի հեռավորությունների վրա գործող ուժով փոխազդեցություններին մասնակցող մասնիկներ են):

Երբ Տիեզերքի ընդարձակման պրոցեսում ջերմաստիճանը բարձր է եղել 10284-ից, տարածությունը լցրել է նյութի գերտաք խառնուրդը՝ բաղկացած բոլոր հիմնարար մասնիկների հավասար քանակություններից եւ նրանց համապատասխան հակամասնիկներից: Այդ ժամանակ բարիոնային լիցքը հավասար է եղել զրոյի:

Եթե այդ վիճակը պահպանվեր նաեւ հետագայում, ապա մասնիկների ու հակամասնիկների անհիլիացիայի (մասնիկ-հակամասնիկ ռեակցիա, որը անմիջապես հաջորդում է նրանց հանդիպմանը եւ որի արդյունքում իրենք ոչնչանում են, ու առաջանում են բոլորովին այլ մասնիկներ) երեւույթից հետո չէր մնա ոչինչ՝ ի բացառություն ֆոտոնների ու նեյտրինոյի:

Բայց տեսության համաձայն՝ նշված ջերմաստիճանում կարող էին առաջանալ գերծանր մասնիկ-

ներ, որոնք հետագայում կտրոհվեին, սակայն մասնիկներն ու հակամասնիկները կտրոհվեին տարբեր հավանականություններով: Վերջնարդյունքում դա կհանգեցներ նրան, որ կլինեին բարիոնների ոչ մեծ ավելցուկ հակաբարիոնների նկատմամբ, այսինքն՝ երեւան կգար բարիոնային լիցքը:

Համաձայն Վիկտոր Համբարձումյանի՝ գալակտիկաների միջուկներում եւ քվազարներում կան նախաստղային գերխիտ նյութի թանձրուկներ, որոնց հաջորդական տրոհումով էլ պետք է բացատրել Տիեզերքի հետագա էվոլյուցիան:

Բյուրականյան վարկածի շրջանակներում Ռուդոլֆ Մուրադյանը ինքնատիպ գաղափար է առաջ քաշել ու մշակել, համաձայն որի՝ մեր Մետազալակտիկան ծնվել է գերզանգվածեղ գերհաղորնի (զանգվածը՝ 1056գ) պայթյունից: Դրա համաձայն, գերհաղորնի տրոհումը համեմատաբար ավելի փոքր հաղորնների հանգեցրել է գալակտիկաների նախակույտերի ձեւավորմանը, հաջորդած տրոհումները՝ գալակտիկաների ձեւավորմանը: Եթե գաղափարը ճիշտ է, ապա տեսանելի Տիեզերքը պետք է օժտված լինի սեփական պտույտով: Ճիշտ է, սման պտույտը միայն անհրաժեշտ, բայց դեռ բավարար չէ գալակտիկաների ձեւավորման Մուրադյանի առաջարկած մեխանիզմի ճշմարտացիության ապացուցման համար: Այնուամենայնիվ, կրկնակի ռադիոաղբյուրների դիտման ժամանակ հայտնաբերված փաստերը կարծես խոսում են այդ գաղափարի օգտին:

Անգլիացի աստղագետ Ջ. Բենքը ուսումնասիրել է այդպիսի հարյուր ռադիոգալակտիկաներ, որոնք երեւում են երկնքի հյուսիսային ու հարավային կիսագնդերում: Էլեկտրամագնիսական, այդ թվում ռադիո ալիքները, ի տարբերություն ծայնային ալիքների, լայնական են: Եթե ծայնային ալիքների տատանումների ուղղությունը համընկնում է ալիքի տարածման ուղղության հետ, ապա էլեկտրամագնիսական տատանումները ուղղահայաց են ալիքների տարածման ուղղությանը: Եթե լայնական տատանումները նաեւ տեղի են ունենում նույն հարթությունում, ապա էլեկտրամագնիսական ալիքը կոչվում է զծային բեւեռացված, իսկ տատանումների հարթությամբ

ըն ուղղահայաց հարթությունը կոչվում է բեւեռացման հարթություն: Վերը նշված դիտումների ընթացքում չափվում էին կրկնակի ռադիոաղբյուրների բաղադրիչները միացնող գծերի եւ նրանց ռադիոառաջալսման բեւեռացման հարթությունների ուղղությունների կազմած անկյունը: Եվ զարմանալի էր երեւույթ նկատվեց. պարզվեց, որ երկնքի մի կիսագնդում գտնվող ռադիոաղբյուրների համար այդ անկյունը մի նշան ունի, մյուս կիսագնդում գտնվողների համար՝ հակառակ: Դա կարող էր այսպիսի բացատրություն ունենալ՝ բեւեռացման հարթության պտույտը արտաքին մագնիսական դաշտի ազդեցությամբ (Ֆարադեյի էֆեկտ): Բայց այդ գործոնը հետազոտողների պնդմամբ հաշվի առնվել էր եւ հետեւաբար, հատկանիշների հայտնաբերված տարբերությունը, արտագալակտիկական բնույթի է: Հընթացս պարզվեց մի ուրիշ բան էլ. կրկնակի ռադիոաղբյուրների ռադիոառաջալսող բաղադրիչները իրար հետ ունեն գաղափար կապեր: Դիտումները ցույց տվեցին, որ մի կիսագնդում այդ գաղափար գոյացությունները թեքված են մի կողմ, մյուսում՝ հակադիր կողմ: Վերջապես, կրկնակի ռադիոաղբյուրները պտտվում են սեփական առանցքների շուրջը: Եվ այդ առանցքները տարածության մեջ ունեն ինչ-որ մախրման լի ուղղություն:

Ինչի՞ մասին է վկայում այս ամենը: Թեմա այն բանի, որ մոլեկուլային Տիեզերքում կան ընդհանուր հատկություններ, որոնք, խախտում են նրա իզոտրոպիան (այսինքն՝ ֆիզիկական հատկությունների անկախությունը ուղղությունից): Իսկ դա, մասնավորապես, կարող էր լինել Տիեզերքի պտույտը մի անկյունային արագությամբ, որը կապահովեր մեկ լրիվ պտույտը հարյուր տրիլիոն տարվա ընթացքում:

Եթե երբեք այս ամենը հաստատվի, ապա այն հսկայական նշանակություն կունենա ժամանակակից բնագիտության համար:

**Չափեն ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
**Շիրակի մարզի Նոր Կյանքի միջնակարգ դպրոցի տնօրեն, աստղագիտության ուսուցիչ**

Արամ Սեֆեթճեան

Երկխոսութիւն Թերէեան բախաստեղծին հետ

Գիշեր մըն է այս՝ լուռ ու հանդարտ, յար եւ նման իմ այն գիշերներուս, երբ նստած գիրքերուս հետ դեմ առ դեմ, կը թղթատեն զանոնք ես, ինչպէս՝ կեանքը մարդերուն:

Եւ ահա գիրք մը՝ որ ձեռքս է այս պահուս, քուն գիրքդ վարպետ, քու հոգիդ, քու կեանքդ որ այս թուղթին ես յանձնէր: Դուն տարիներով գրեցիր անընդհատ «հոգիներու բարեկամութեան»ը համար, ինչպէս սովոր էին ըսել, եւ ամէն էջ, ամէն տող, ամէն բառ քու գիրքդ, կենդանի վկան է քու նտածումիդ, քու ապրումներուդ:

Եւ ինչ ըսեմ վարպետ, այս ապրիլեան գիշերով, երբ տակաւին հոգիս անհանդարտ է ու խռով: Տո՛ւր իմօ՛ր խաղաղութիւն քու հոգիդ որ անմահ է. չէ՞ որ հոգին ալ լոյսի նման չէ կարելի թաղել, դամբանել:

Ու հիմա, երբ կը բանամ գիրքդ, կը տեսնեմ քեզ նստած ու «մէկ հատիկ»դ յառած մատներուդ, որոնք գիր կը գրեն, հնագանդելով քու ստեղծագործ միտքիդ, որպէսզի քու փառքդ կերտես, իբրեւ հաւասարապէս մեծ Յայ, Բանաստեղծ ու Մարդ:

Դուն մարգարէ մը, որ մեր ահաւոր եղեռնէն անմիջապէս ետքն իսկ ունեցար տեսիլքը մեր կեանքին, հայուն վերածնող կեանքին «Յրաշալի յարութեան»ը:

Դուն, խորհրդանշան Սփիւռքի մեր անտուն կեանքին:

Դուն, բանաստեղծ հայերգութեան ու սիրոյ տաճարին:

Թոյլ տուր ինձի, որ այս գիշեր քեզմով լեցունիմ. քեզմով արթնեմ, եւ իմ հոգիս քեզի գայ երկիւղած ու ծնրադիր:

Ես քուկը եմ այս գիշեր, իսկ դուն իմս: Ու ես ամէն անգամ որ բանամ շրթներս առ քեզ, քու բառերովդ քեզ պիտի երգեմ ու ըսեմ՝

«Ինչ որ տուիր, կը դարձնեմ զայն քեզի...»

Չէ՞ որ, իմ այս գիշերս ես քեզի եմ ձօներ: Գիտեմ, տարիներ առաջ, երբ «Տաղարան»իդ վերջին էջն ալ դարձուցիր, անակնկալօրէն քու «մէկ հատիկ»դ փակուեցաւ այս աշխարհին լոյսին ու ստուերին, գարնանային առաջին գիշերներէն մէկուն, ապրիլեան գիշեր մը:

Ու հիմա ես նստած ճիշդ դիմացը նկարիդ, կը զգամ թէ «Քու յիշատակդ այս գիշեր գիս լալու չափ կը յուզէ...»: Կը մտնեմ պահ մը քու կեանքիդ պարտէզէն ներս, ու կը թողում որ ակնարկս իր պտոյտը կատարէ, լո՛ւռ ու միայնակ:

«Քեզի նման ու քեզմով կը նային ես ալ վըրայդ, երկարօրէն, ծանրօրէն...»:

Ու կ'երեւակայեմ քեզ պահ մը: Նախ

տղու հոգիդ կը գտնեմ ես, կեցած իմ դիմաց, ու կը տեսնեմ քու վրադ այն բոլորը որ կը հայացնեն քեզ:

Տառապեցար դուն եւ այնքան անելի՛ որքան մեծցար, դարձար երիտասարդ ու տառապանքով ազնուացաւ քու հոգիդ. հայ էիր, ու մնացիր հայ, եղար մարդ, զգեցած վրադ ամբողջական իմաստն անոր, ու քու «Յրաշալի Յարութիւն»ովդ եղար բանաստեղծ, «իրաւի» բանաստեղծ:

Դուն, երիտասարդ մը դեռ, նման այն բոլոր տղոց, սիրեցիր կեանքը անյագօրէն, փարեցար անոր ամբողջ զօրութեամբը հոգիդ: Սիրեցիր հայրենիքդ, որուն ... «միտքդ առաջ, սիրտդ փարեցաւ»:

Սիրեցիր քու «ծննդավայրը՝ հոգւոյդ» գոր «կը տեսնես աչքդ գոց»... «Որուն ետեւ սկիհին մէջ, կ'իջնէ ինքը Աստուած»... եւ քու սերովդ սիրցուցիր մեզի այն, որ իր «Մէն մի քարին տակ գետնի, դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի»:

Սիրեցիր դուն վարպետ, ի՜նչ գիտնամ, գաղտնի սերով. չէ՞ որ ըսիր՝

«Արս այն դուռն էր կարծես Ուրկէ ոչ որ մըտաւ ներս, Ծաղիկներով ծածկուած՝ Գաղտնի պարտէզ մըն է սերս»:  
Այլապէս պիտի չըսէիր յետոյ՝  
«Ես սիրեցի բայց ոչ որ Սիրածներէս գիտցաւ թէ Զինքը որքան սիրեցի»:  
Ո՞վ կարողալ սիրտը գիտէ...»

Եւ այդ սերնէն ետք գաղտնի, զաւակ մը ուզեցիր. ու պոռագի քու տենչդ Անոր որ «զլացաւ քեզի... զաւակի մը շնորհն անգամ» ու յետոյ դուն տրամազին երգեցիր՝

«Օտար տղոց աչուրներուն, հոգւոյն մէջ Դողդղազին պիտի տղաս որոնեմ, Եւ անձանօք պիտ մեռնի՜մ անոնց դէմ...»

Իսկ երբ գտար դուն քեզ տղու մը դիմաց, քու ակնարկդ յառած անոր՝ շշմեցաւ իր «Եկուր, անցեալս ու ներկադ թող գրկուիմ գաղտնապէս»:

Ու մինչ հոգիդ կ'աճեր իր յոյզերով եւ յոյսերով, յանկարծ աշխարհի տակնուվրայ եղաւ: Գացի անհետ քու գրչեղբայրներդ բոլոր, ազգդ կ'ստուգաւ եւ դուն եղար տարագիր՝ Նեղոսի ափին: Քու հրդեհուած հոգիդ, գոռաց թուրքին երեսին՝

«Պիտի իյնաս, կ'իյնաս ա՛լ... Բայց որպէսզի դեռ ճանչնաս

Քու անարգ սիրտը՝ ծակող մեծագոյն ցաւը վերջին՝

Պիտի գարնեն քեզ անոնք որ քեզ յաճախ փրկեցին...»

Իսկ յետոյ քու ալեկոծ ու խռով հոգիով ըսիր Աստուծոյ՝

«- Մեզ դժոխք, դժոխք դրկէ՛ անգամ մ'ալ,

Չէ՞ որ զայն լաւ կը ճանչնանք, զայն ճանչցուցի՛ր մեզ շատ լաւ,

Եւ Թուրքերուն յատկացուր արքայութիւնդ անբաւ...»

Կարելի՞ էր արդեօք ասկէ անելի խօսուն, կենդանի՛ բառերով արտայայտել մեր ցաւը, դժոխային մեր կեանքը, վարպետ, կարելի՞ էր: Իւրաքանչիւր հնչեակ քեզմէ բաբախող սիրտ մըն է, որմէ կարելի չէ գիր մ'իսկ գեղչել: Դուն նման ես զգայուն ջերմաչափի մը, մեր ճակատագիրին ելեւէջները արձանագրող, զգացունով, հոգիով, կեանքով տրոփում: Կու լա՛ս դուն, կ'աղաղակես մեր ազգին ցաւին դիմաց: Բայց չես վիրաւորեր, յուսահատ ճիշեր կ'արձակես, սաւայն չես ամչցներ, կը ներշնչես դուն մեզ նոր յոյսերով, նոր երգերով:

Դուն եղար անտուն բանաստեղծ, անօթեան, թափառական: Մեր կոտորածէն ետք, հայ «որբերուն աղօթք»ը տրվեցնող քերթող. ու քու հայրական շրթներով, արտասանեցիր անոնց փոխարէն՝

«Երկինք, կ'ուզենք քեզ մեր վերեւ ունենալ՝

Չի հող կ'ըսուի թէ մեր ծնողները կ'ապրին,

Ու մենք կարօտն ունինք անոնց ժպտին...»

Միայն ժպտի՞մ, ա՛հ, միայն ժպտի՞մ...: Ու մինչ սփիւռքի ցաւն եղող որբերէն անդին, Արագածի կանթեղին յարեցիր աչքդ, տեսար թէ հոն հայրենիքդ ինքզինք կը վերագտնէր ու կը ծաղկէր գարնան նման, ցաւեցար որ «քէն ես ըրած, թիչ մը ատեն, - մինչեւ երկէ -» եւ ըսիր՝

«Տարբեր ես դուն մեր երազէն.- անելի՛ լաւ.

Աւելի լաւ՝ կ'ըսես, այո՛, անգիղջ, անգութ, Չի դատակնիքն է չեղածին փաստն ըլլալուր...»:

Ահա նորէն պատերազմ, բայց այն տարբերութեամբ որ մեր հայրենիքի գինուորները հերոսաբար կը յաղթէին, եղբայրաբար օգնելով խաղաղասէր ժողովուրդներուն: Մայիսեան գեղեցիկ առաւօտ մը կը մտնէին անոնք ոճրապարտ թշնամիին որջը... Բայց աւա՛ղ, ամիս մը ետք քու մահէդ:

Ապրէիր դուն, վարպետ, ու տեսնէիր յաղթանակ մեր հերոս մարտիկներուն:

Ապրէիր ու տեսնէիր վերադարձը բազմահազար Յայերու, դէպի երկիրն Արարտեան:

Տեսնէիր եւ այդ ըլլար ապրում քու մէջդ, ըլլար քերթուած:

Ապրէիր, եւ դուն ալ այդ հազարաւորներէ-



րուն հետ կեանքիդ վերջին օրերուն դուն քեզ գտնէիր հայրենի կարմիր հողին վրայ, վերագտնէիր ինքնութիւնդ վերջնականօրէն, չբանտուէր հոգիդ Անհունին ուղղած երկտողիդ մէջ, թէ՛

«Ճայռերու մէջ գիս հող մ'ըրիր, արգաւանդ

Եւ այդ հողին շիթ մը անձրեւ զլացար»:  
այլ՝ քեզմէ ներս վերածնող մէկ նոր շարքը Արարտեան Դաշտի երգերուդ, վերստին ծնունդովդ նոր Յայուն:

Ու կը հաւատանք քեզի հետ սիրելի Վարպետ, որ... պիտի նոր Մարդը ծնի Բանաստեղծի մը երգէն սիրոյ ցասումի:

Ու պիտի գայ այն Օրը, երբ նորածին մարդկային սերունդներու հաւաքական յոռի ըմբռնումներէն, ի սպառ պիտի ջնջուին հետքերը Մամոնային ու Նեեին, բոլոր կուռք-չաստուածներուն, ու պիտի վերածնի Գիտակցութիւնը ԻՍԿԱԿԱՆ ՆՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ, նման այն Արդար Արեգակին, որ բոլորիս շնորհուած *Լոյսի Առաւօտն է, Բանն է ու Բանականութիւնը, էն ու Լուսիւնը... Անսկիզբ եւ Անվախճան: Մեր անվերջակէտ ու գերազնիւ զգացողութիւնը համամարդկային:*

... Գիշեր է տակաւին: ... Ու կը հասնին ինձի ՁԱՅՆԵՐ ԼՈՒԹԵԱՆ ՄԵՋ... Կը յորդին անոնք Գիրքերուս էջերէն ու կ'ալեկոծեն ներաշխարհս:

Պէյրուք, Լիբանան  
ըստ «Ռամկավար Մամուլ»-ի

Կանձրեւ, տղա՛ս

Կանձրեւ, տղա՛ս... Աշունը թաց է, Թաց աչքերուն պէս խեղճ խաբված սիրույն...: Պատուհանն ու դուռը զնա գոցե եւ դեմըս եկուր նստիլ վեհագույն

Լռութեան մը մէջ...: Կանձրեւ, տղա՛ս...: Կանձրեւ՝ երբեմն հոգիիդ մէջ ալ, Կմըսի՞ սիրտըդ, եւ կողողողա՛ս՝ Խորհելով պայծառ արեւին անցյալ:

Դռան մը ներքեւ գո՛ց ճակատագրին...: Բայց կուլաս, տղա՛ս... Մութին մէջ հանկարծ Ծանր արցունքներ աչքեդ կ'զլորին...:

Լա՛ց անմեղութեան արցունքը անդարծ, Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգետ տղաս, Խե՛ղճ որսը կ'յանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս...:



Տաղ Յայերէն լեզվին

Քե՛զ, Յայ Լեզու՛, կսիրեմ մրգաստանի մը նման... Մեր անցյալին թանձրախիտ սովերներուն մէջ կարծես Մեյ-մեկ պտուղ՝ քու բոլոր բառերդ ինձի կերեւան, Որոնց մեջքն կըքալեն ու կըքալեն զանոնք ես:

Մրգաստանի մը նման կսիրեմ քեզ, Յայ Լեզու՛... Մեր հայրենի պալատեն, պարտեզներէն մնացորդ՝ Դալարագեղ դուն պուրակ, որ դիմացար դարերու եւ կմընաս միշտ առույգ, հին ավիշով կենսահորդ:

Ծառերուդ մէջ հովանուտ կերթամ խինդով մ'անսահման, Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ, Զարմանալով, թէ ինչպէ՛ս դուն մնացիր, երբ սաստիկ Քամին քու շուրջըդ փչեց եւ տապալվեց ամեն բան:

Մեյ-մեկ պտուղ գույնզգույն ամբողջ բառերդ ահա, Յոյութեդ բառերդ, զոր որքան հասունցուցին արեւներ, Բառերդ, որոնք այս պահուս շրթանցս վրա եմ բռներ, Բառերդ, որ քիմքս կօծեն եւ կսփոփեն սիրտս հիմա...:

Քու հիշատակդ այս գիշեր

Քու հիշատակդ, այս գիշեր, գիս լալու չափ կիւզե. Կարծես մեկնած էր սրտես, եւ գաղտնաբար այս գիշեր ետ կղառնա, ու հին տեղն ու հին զգվանքը կուզե, Կսեղմըվի գրկիս մէջ, կըքարձանա կուրծքս ի վեր:

Քու պատկերդ աչքիս մէջ եւ քու ձայնդ ականջիս, Կթրթռան այս գիշեր, երակներուս մէջ կարծես Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կզգլխե, կօրրե գիս, Մինչ երեսես ալ կանցնին կարծես մատներդ ամտես:

Ետ կղառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ, Կարավանին հետ աստեղց անոնք կուզան վերստին, Յոգիս փարախն է բացվող ընդդէմ իր քաղցր հոտին:

Յիշատակովդ, այս գիշեր, կզգամ անչափ գիս հարուստ, Այնչափ բարի, երջանիկ... որ գթութեամբ մը անհուն Կմտածեմ զայն բաժնել երկրի բոլո՛ր խեղճերուն...:



Փորձիր մտապահել

V-XII դդ. Սյունիքի նշանավոր ուսումնագիտական կենտրոնները եւ ուսուցչապետները



Իր ամրակուռ բերդերի, անառիկ ամրոցների, մեծաքանակ զինված ուժերի եւ ռազմապաշտպանական հզորության շնորհիվ Սյունիք աշխարհը առանձնահատուկ հռչակ է վայելել ու հսկայական նշանակություն ունեցել Մեծ Հայքի տարածքային ամբողջականության պահպանման եւ պետական սահմանների անասանության ապահովման գործում: Լեռնաստանը միաժամանակ ծանրակշիռ ավանդ է ունեցել Հայաստանի հոգեւոր-մշակութային կյանքում՝ նպաստելով հայալեզու դպրության, գիտության, մատենագրության, թարգմանական գրականության զարգացմանը եւ ազգային ինքնության ու ավանդույթների պահպանմանը:

Սյունյաց աշխարհի վարչական ու հոգեւոր կենտրոնը Ճղուկ գավառի Շաղատ գյուղաքաղաքն էր, ուստի ուսումնագիտական կենտրոնը եւս ստեղծվում է այստեղ: Շաղատում գործող Սյունյաց վարդապետարանը հարատևում է մինչև IX դար: Սյունիքի մյուս դպրոցների համար վարդապետներ ու ռաբունիներ պատրաստում էր հենց Շաղատի վարդապետարանը. այն Սյունիքի հոգեւոր-կրթական գործի նվիրյալների քուրան ու դարբնոցն էր: Շաղատի վարդապետարանի հիմնադիր է համարվում Անանիա Սյունեցի եպիսկոպոսը, որը սուրբ Մեսրոպ Մաշտոցի աշակերտն էր եւ եպիսկոպոս է ձեռնադրվել սուրբ Սահակ Ազ Պարթեւ կաթողիկոսի ձեռքով: Գ. Գալենքերյանը նկատում է. «Սիւնեաց վարդապետանոցը՝ երանաշնորհ թարգմանչաց ժամանակի զեղեցիկ ծնունդներն մեկն է, Ս. Մեսրոպի աշակերտութենէն Անանիա, որ Սիւնեաց եպիսկոպոս ձեռնադրուած էր Ս. Սահակ հայրապետէն, առաջին անգամ հաստատեց իր երկրին մէջ դպրոց մը, եւ իր աշակերտներէն Բենիամինի յանձնեց անոր տեսչութիւնը»:

Ըստ պատմիչ Կորյունի հաղորդած տեղեկությունների՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո մեծ եռանդով ու ոգեւորությամբ ձեռնամուխ է լինում Հայաստանում հայագիր դպրության հիմնադրմանը եւ դպրոցական ցանցի ընդլայնմանն ու կրթական գործի ծավալմանը: Սյունիքում Մաշտոցի կրթալուսավորական ձեռնարկումներին նյութապես եւ բարոյապես աջակցում է Սյունյաց տանուտեր եւ նահապետ Վաղինակ իշխանը: Մաշտոցն առաջին հերթին աշակերտներ է ընտրում Սյունիքի առավել խուլ եւ վայրենաբարո բնակավայրերից՝ «Եւ ժողովեալ մանկունս առ ի միւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զգիւղաքարոյ կողմանցն. եւ այնչափ փոթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել...», քանի որ տեղացի ուսուցիչները շատ ավելի լավ գիտեին տեղական բարքերն ու ավանդույթները եւ հետագայում ավելի պատրաստակամ, ջերմեռանդ, սիրով ու նվիրումով կաշխատեին ուսումնաստեմք երեխաների հետ: Սուրբ Մեսրոպի ընտրած այս երեխաներից շատերը հետագայում կրթված ուսումնականներ, եպիսկոպոսներ ու թարգմանիչներ դարձան: Մաշտոցի սյունեցի շնորհալի աշակերտների թվում էր Անանիան՝ «այր սուրբ եւ երեւելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ», որին Մաշտոցը Սյունյաց եկեղեցու եպիսկոպոս է կարգում: Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքում

գործած նշանավոր աշակերտներից հիշատակվում է նաեւ Բենիամինը, թեւեւ աղբյուրներում նրան տրվում է «աղոււսն ազգաւ» բնորոշումը, իսկ որոշ ուսումնասիրողներ էլ նրան համարում են հայ, բայց Աղվանից աշխարհից: Աղվանից գիրը ստեղծելիս Մաշտոցին աջակից է եղել հենց Բենիամին երեցը: Հավանական ենք համարում, որ Բենիամինը ոչ միայն հայ էր, այլեւ ծնունդով սյունեցի, քանզի դժվար թէ այլազգի մեկը Սյունիքում այդքան հարազատորեն ծավալեր հայ երեխաների հայեցի կրթության ազգանվեր գործը: Մաշտոցը Սյունյաց առաջին թարգմանական առաքելության ավարտին իր ընտրյալ աշակերտներ Անանիային եւ Բենիամինին թողնում է Սյունիքում ու նշանակում թարգմանիչ եւ ուսուցիչ. «Իսկ սուրբ այրն Աստուծոյ, թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման եւ ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամինն եւ զԱնանիան, որ ձեռնադրեցաւ յետոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին զի մի վերստին (անկցի ի մոլորութիւն) եւ ինքն զնայ առ սուրբն Սահակ»:

Կորյունի վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտոցին Հայաստանի արեւելյան մահաճգնեղում, մասնավորապես՝ Սյունիքում, դպրոցներ հիմնելու, լուսավորություն տարածելու եւ հայեցի դպրության ամրապնդման գործում աջակցել է Վասակ Սյունից, որն իր հորեղբայր Վաղինակից հետո դարձել էր Սյունյաց տանուտեր:

Սահակ Պարթեւ հայրապետն ու Մեսրոպ Մաշտոցը բարձր էին գնահատում Սյունյաց վարդապետարանի ներկայացուցիչների ունակությունները հատկապես հունարենից թարգմանություններ կատարելու եւ դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ, մեկնություններ գրելու դժվարին, տքնաջան ու պատասխանատու գործը վերապահում էին հենց Սյունյաց վարդապետարանի խորագիտակ ու քաջահմուտ վարդապետներին: Այս մասին, հիրավի, պարծանքով է վկայում պատմիչ Ստեփանոս Օրբելյանը. «Եւ առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարք հայոց եւ ոչ լինի ժողով, այլ գլուխս եւ հրամանատար ժողովոյ սոքա լինին, եւ նախաթոռ վարդապետութիւն եւ հրաման մեկնութեան եւ թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ի մեջ հայոց ի սրբոյ Սահակի եւ յերանեալ վարդապետէն Մեսրոբայ»: Սա, իրոք, պերճախոս վկայություն է, որ Սյունյաց վարդապետարանը Հայաստանի հնագույն ուսումնագիտական կենտրոններից էր եւ բացառիկ հեղինակություն է ունեցել կրթամշակութային բնագավառի նշանավոր ներկայացուցիչների շրջանում:

Ստեփանոս Օրբելյանի գնահատմամբ՝ «...վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխս էր ամենայն գիտնոց Հայոց, եւ պայծառացեալ դպրոցքն որ ի մեզ. քանզի որպէս Աթենացիքն ի մեջ Հռոմոնոց եւ Յունաց ճոխացեալ էին, եւ մայր իմաստից կոչեցեալ յԻսպանիացւոց աշխարհին լատին եւ հելլեն դպրութեամբ, այսպէս եւ սոքա ի տանն Թորգոմայ յաշխարհիս Հայոց»: Պատմիչն, այնուամենայնիվ, որոշ չափազանցությամբ թերեւս, Սյունյաց վարդապետարանը բարձրացրել ու հավասարեցրել է Աթենքի նշանավոր ձեմարանին: Հայ նշանավոր գիտնական, «Ճշգրիտ գիտությունների հայր» տիտղոսով մեծարված Անանիա Շիրակացին եւս

բարձր է գնահատել Սյունյաց (Շաղատի) վարդապետարանը՝ այն համարելով «գլուխ ու հրամանատար» VII դ. Հայաստանի ուսումնագիտական կենտրոնների: Իսկ հայ մանկավարժության պատմության մեծ երախտավոր Աբգար Մովսիսյանն էլ իրավամբ գրում է, որ «7-րդ դարը հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության մեջ մի առանձին փայլ չէր ունենա, եթե չլինեին Սյունյաց դպրոցները, որոնց գլուխս էր կանգնած հոգեւոր բարձր տիպի դպրոց-վարդապետարանը»:

Հայ միջնադարյան հոգեւոր երաժշտության եւ հայագիր դպրության պատմության մեջ երեւելի վաստակ է թողել Մաշտոցի աշակերտ եւ Սյունյաց վարդապետարանի երաժշտության ուսուցիչ Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Սյունեցի Առաջին): Որոշ ուսումնասիրողներ համարում են, որ նա եղել է Սյունյաց եպիսկոպոս, սուրբ Թարգմանիչների (իմաստաւոր) աշակերտ եւ V դ. հեղինակ, թեւ Ստեփանոս Օրբելյանի թվարկած է V դ. Սյունյաց եպիսկոպոսական աթոռը զբաղեցրած գահակալների շարքում բացակայում է Ստեփանոս Սյունեցու անունը: Հնագույն Շարակնոցներում ամփոփված է Ս. Հարության տոմարը Հայոց եկեղեցիներում երգված ուրախագրերի ուրբան «Յարութեան» շարականները, որոնք համարվել են հայ հոգեւոր երաժշտության ամենավաղ ինքնուրույն մուշններ, մասնագիտական գրականության մեջ վերագրվել են Ստեփանոս Սյունեցու գրչին:

Սյունյաց վարդապետարանի երեւելի ուսուցչապետներից է VI դ. մատենագիր, տոմարագետ, պատմիչ, իմաստասեր, մեկնիչ, ճառերի հեղինակ եւ մեծավաստակ մանկավարժ, քերթող-հայր Պետրոս Սյունեցին: Ստեփանոս Օրբելյանը նրան մեծարում է հետեւյալ խոսքերով. «քաջ հռետորն եւ անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ եւ կատարեալ առաքինութեամբ. նախաթոռ վարդապետաց Հայոց, քերթող եւ թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս, եւ արար ճառս իմաստաւից ի ծնունդն Քրիստոսի եւ ընդդէմ քաղկեդոնականացն եւ այլ յոյովս, եւ մեկնեաց գիրքին եւ զգծուարիմաց բանս Հին եւ Նոր Կտակարանաց»:

